«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

Գեղարքունիք տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվել և իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթական գործընթացի իրականացման վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 15

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 15

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 17

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 19

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 24

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 29

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 34

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 37

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 40

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 44

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 46

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 49

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 55

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 57

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 62

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 64

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԳՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որը որպես առաքելություն ընդունել է. գիտելիքի ստեղծում, փոխանցում և տարածում, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորում, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստում, որակյալ մասնագետների պատրաստում տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճի ապահովում, տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժի զարգացում:

Փորձագիտական խումբը հաշվի է առել ԳՏՊՔ-ի, որպես միջին մասնագիտական ուսումնական հաստատության, նշանակությունը Գեղարքունիքի մարզի և, դրանով իսկ, ՀՀ-ի համար, միաժամանակ հաշվի է առել մարզի առանձնահատկությունները: Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ ԳՏՊՔ-ն առաջին անգամ է անցնում հավատարմագրման գործընթաց:

ԳՏՊՔ-ն յուրահատուկ դեր և նշանակություն ունի տարածաշրջանի աշխատաշուկայի միջին մասնագիտությամբ պայմանավորված պահանջարկը լրացնելու հարցում, նաև այն դիտվում է որպես բուհերում շարունակական կրթության ապահովման օղակ: Սակայն ԳՏՊՔ-ն դեռևս չի կարողացել լիարժեք ներգրավել շահակիցներին, իր ռազմավարական ուղղությունների ձևավորման, նոր հնարավորությունների բացահայտման գործընթացներում: Հատկապես գործատուների հետ ամուր կապը կարող է նոր զարգացման հնարավորություններ ստեղծել, ինչը կարևոր է քոլեջի շարունակական բարելավման համար:

Չնայած որակի ներքին ապահովման ուղղությամբ որոշ փաստաթղթեր քոլեջում ներդրվել են դեռևս 2016 թ.-ից, սակայն քոլեջը համարում է, որ դեռևս նոր է ներդնում որակի ապահովման մշակույթը, դրա հետ մեկտեղ դեռևս ձևավորված չէ որակի ապահովման համակարգի հստակ ուրվագիծ և պատկերացումներ: Քոլեջում իրականացվում են որոշ հարցումներ, սակայն առկա չեն դրանց հիման վրա իրականացված վերլուծություններ, որոնք կիրառելի կլինեին բարեփոխումների իրականացման համար:

Քոլեջը մշակել է ռազմավարական զարգացման ծրագիր, սակայն նկատելի է նպատակների և գործողությունների միջև խզում, նկատելի չէ որակի ապահովման գործընթացների ադեցություն կառավարման գործընթացների վրա: Չնայած առկա է հաշվետվողականության որոշ մեխանիզմ, սակայն վերջինս չի կապակցվում ռազմավարական ծրագրի հետ: Խիստ նկատելի է նաև ֆինանսական և այլ ռեսուրսների պակասը նպատակների

իրականացման համար, ինչը նաև հնարավոր ֆինանսական մուտքեր չապահովելու հետևանք է:

Վերոնշյալի արդյունքում փորձագիտական խումբը եզրակացնում է, որ չնայած քոլեջը որոշ քայլեր է ձեռնարկել որակի ապահովման և գործընթացների կառավարման ուղղությամբ, սակայն դեռևս գործընթացների և զարգացման պլանավորումը չի բխում հնարավորությունների, ռեսուրսների և ռիսկերի հստակ հաշվառումից, և առկա չեն զարգացմանն ուղղված գործընթացներ:

ԳՏՊՔ-ի ՄԿԾ-ները կազմված են ՈԱՇ-ին և ՊԿՉ-ներին համապատասխան, սակայն աշխատաշուկայի և այլ համակողմանի ուսումնասիրությունների բացակայության, ինչպես նաև գործատուների լայն շրջանակի հետ թույլ կապի արդյունքում տուժում են ՄԿԾ-ների ներդրման և դրանց զարգացման գործընթացները, մասնավորաբար նույնիսկ նոր ներդրված ՄԿԾ-ների պարագայում դիմորդի բացակայության խնդիր է ի հայտ գալիս: ԳՏՊՔ-ն ունի գիտելիքի գնահատման սահմանված մոտեցումներ, կիրառում է ուսանողների գիտելիքները և կարողությունները զարգացնող ուսուցման ձևեր, հանձնարարականներ, սակայն դեռևս անկատար են պրակտիկ և վերլուծական կարողությունները երաշխավորող մեթոդները: ՄԿԾ-ների իրականացման արդյունվետության մասին պատկերացումներ ձևավորելու համար առկա են որոշ առանձին ազդակներ, սակայն համակողմանի տվյալների հավաքագրման և դրանց վերլուծության գործընթաց դեռևս առկա չէ:

ԳՏՊՔ-ն դասախոսական կազմի ընտրության ժամանակ առաջնորդվում է ՊԿՉ-ներով ներկայացված պահանջներով: Գնահատելի է, որ քոլեջը կարևորում է դասախոսական կազմի սերնդփոխման ապահովման և պրակտիկ դասավանդողների ներգրավման գործընթաացները և այս ուղղությամբ քայլեր է իրականացնում: Սակայն քոլեջում դեռևս առկա չէ կարիքների հիման վրա միջոցառումների կազմակեպման գործընթաց: Սա նաև պայմանավորեցվում է ֆինանսական ռեսուրսների սղությամբ: Փորձագիտական խումբը գտնում է, որ գոծատուների հետ համագործակցության շրջանակները ընդլայնման լուրջ հնարավորություններ ունեն, այդ թվում նաև՝ դասախոսների կատարելագործմանն ուղղված: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում նեղ մասնագիտական ուղղություններով դասավանդողների առկա խնդիրները: Փորձագիտական խումբը ուշադրության արժանի խնդիր է համարում քոլեջներում դասախոսական կազմի առաջընթացի մեխանիզմների բացակայությունը ինչը խոչընդոտում է նրանց կատարելագործմանն ու մոտիվացվածությանը: Առանցնացված նման մեխանիզմների բացակայությունը կրկին կապակցվում է ֆինանսական ռեսուրսների սղության հետ: Բացի այդ փորձագիտական խումբը լուրջ խնդիր է համարում նաև մարդկային ռեսուրսների այլ խնդիրներ, երբ նույն անձը բազմաոլորտ մի քանի վարչական հաստիքներին համապատասխան աշխատանքներով է բեռնված, և արդյունքում տեսանելի չեն այդ ուղղություններով առաջընթացի երաշխիքներ:

ԳՏՊՔ-ն ջանքեր է գործադրում ռեսուրսների բարելավման և դրանց նորացման ուղղությամբ, այս տեսանկյունից որոշ համալրումներ են իրականացվել՝ պայմանավորված տարածաշրրջանային քոլեջ հանդիսանալու հանգամանքով: Քոլեջը նաև կիրառում է գործատուների ռեսուրսները կրթական ծրագրերում նախատեսված պրակտիկաների իրականացման նպատակով: Սակայն առկա են նաև կրթական ծրագրեր, որոնց շրջանակում ռեսուրսները բավարար չեն և այդ ուղղությամբ համապատասխան գործատուների խնդիր է առկա: Միաժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ ռեսուրսների համալրման և

արդիականացման ուղղությամբ աշխատանքները դեռևս բարելավման անհրաժեշտություն ունեն, և դրան կարող է նպաստել արտաքին կապերի համապատասխան քաղաքականությունը, որի արդյունքում կընդլայնվի գործատուների հետ համագործակցությունների շրջանակն ու բովանդակությունը, ԳՏՊՔ-ն կներգրավվի ռեսուրսների համալրման հնարավորություններով ծրագրերում, կբազմազանեցնի ֆինանսական մուտքերը, կներգրավի բարերարների և այլն: Առանձին դեպքերում վեր են հանել որոշ ռեսուրսների խնդիրներ, սակայն դեռևս չունեն ռեսուրսների կարիքների վերհանման, դրանց կիրառման արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:

Չնայած առկա են տարբեր խնդիրներ մարդկային և որոշ այլ ռեսուրսների ուղղությամբ, ինչպես նաև կրթական ծրագրերի նպատակային ներդրման գործընթացներում, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

ԳՏՊՔ-ն ունի ուսանողների ընդունելության հստակ ընթացակարգ, առկա են նաև դիմորդների հավաքագրման մեխանիզմներ, չնայած որ դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմներ չունեն: Ուշադրություն է հատկացվում ուսանողների կրթական կարիքների բացահայտմանը և առկա են տարբեր մեխանիզմներ, սակայն, փորձագիտական խմբի դիտարկմամբ, ուսանողների կարիքների բացահայտումն առավելապես իրականացվում է կուրսղեկների միջոցով: Կազմակերպվում են միջոցառումներ՝ փորձելով ներգավել ուսանողներին, ինչպես նաև իրականացվում են ուսանողների կարիերային նպաստող որոշ ծառայություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը դեռևս լուրջ անելիքներ ունի ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածության ապահովման, նրանց վերլուծական կարողությունների զարգացման ուղղությամբ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը հետազոտական ուղղությամբ շեշտակի քայլերի իրականացման անհրաժեշտություն ունի: Այս տեսանկյունից կարևոր են ինչպես նպատակների ձևավորումն ու դրանց ուղղված հստակ պլանավորումները, այնպես էլ հստակ գործընթացների ապահովումն ու դրանց ուղղված խրախուսման և աջակցման մեխնիզմների ներդրումը: Փորձագիտական խումբը համարում է, որ հետազոտության ոլորտում առկա խնդիրները կարող են խոչընդոտել ինչպես ուսումնական գործընթացի կատարելագործմանը, այնպես էլ քոլեջի զարգացման ապահովմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջներում այնպիսի մեխանիզմների ներդրումը, որոնք կապահովեն դասախոսի առաջընթացը հետազոտական արդյունքների հիման վրա, որում կարևոր կլինի նաև համապետական մոտեցման ներդրումը:

ԳՏՊՔ-ն ունի հաշվետվողականության մեխանիզմ ներքին և արտաքին շահակիցների առջև: Սակայն դեռևս բարելավման աշխատանքներ են անհրաժեշտ՝ դրանց վերլուծական դարձնելուն ուղղված: Քոլեջը որոշ հրապարակումներ ունի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում, սակայն դրանց թարմացման և լավարկման աշխատանքները բարելավման կարիք ունեն: Քոլեջը նաև որոշ աշխատանքներ է իրականացնում հասարակությանը արժեքների և գիտելիքի փոխանցման ուղղությամբ: Փորձագիտական խումբը գտնում է, որ որպես տարածաշրջանային քոլեջ այդ միջոցառումները առավելապես հասարակության կարիքներից բխեցնելու կարիք կա:

Քոլեջը մի շարք պայմանագրեր ունի տարբեր հաստատությունների հետ, ինչը թույլ է տալիս կրթական ծրագրերով նախատեսված պրակտիկաներն իրականացնել, չնայած որոշ առանձին դեպքերում առկա են խնդիրներ: Քոլեջը համագործակցության պայմանագրեր ունի

նաև այլ քոլեջների և բուհերի հետ, սակայն դեռևս նկատելի չեն այդ համագործակցությունների հենքով կարևոր ձեռքբերումներ։ Փորձագիտական խումբը գտնում է, որ գործընկերների և գործատուների հետ համագործակցության նեղ շրջանակը և նեղ բովանդակությունը, և արտաքին կապերի (այդ թվում՝ միջազգայնացման) ուղղությամբ հստակ նպատակների, ինչպես նաև համապատասխան խրախուսող և խթանող մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում է քոլեջի զարգացումը և քոլեջը բավարարվում է եղածը պահպանելով։

Ելնելով վերոնշյալից՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԳՏՊՔ-ն որոշ քայլեր է ձեռնարկում զարգացման ուղղությամբ՝ կարևորելով ուսանողների թվի ավելացումը, նանց կարիքները և հաշվետվողականության որոշ մեխանիզմներ ներդնելով, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ արտաքին կապերի և հետազոտության ուղղությամբ հստակ նպատակների և նպատականյին գործընթացների ուղղությամբ նշված խնդիրները խոչընդոտում են քոլեջի ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ զարգացումը։

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Տարածաշրջանում առանձնահատուկ դերը որպես ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներում կրթական ծրագրեր իրականացնող հաստատություն։
2) Առաքելությանը, ՈԱՇ-ին և ՊԿՉ-ներին համապատասխան ՄԿԾ-ներ։
3) Ուսանողների գիտելիքները և կարողությունները զարգացնող ուսուցման ձևերի առկայություն։
4) Ուսանողների ընդունելության և հավաքագրման մեխանիզմների առկայություն։
5) Ուսանողների կարիքների վերհանման կարևորումը։
6) Բազմափորձ և երիտասարդ աշխատակիցներով, մասնագիտական ներուժով դասախոսական կազմ։
7) Պրակտիկ դասավանդողների ներգրավման կարևորումը։
8) Ֆինանսական ռեսուրսների բաշխման գործող քաղաքականություն։
9) Կրթական անվտանգ միջավայրը։
10) Քոլեջի գործընթացների թափանցիկության և հետադարձ կապի ապահովման կարևորումը։
11) Հաշվետվողականության որոշ մեխանիզմների առկայությունը։
12) Որակի ապահովման գործընթացների կարևորումը։

Հաստատության թույլ կողմերն են.

1) Որակի կառավարման սկզբունքի հենքով ռազմավարական կառավարման արդյունավետ համակարգի (այդ թվում՝ ՌԾ նպատակների մշտադիտարկման մեխանիզմների) բացակայությունը։
2) Ֆինանսական և մարդկային ռեսուրսների անբավարարությունը։
3) Ուսանողների հետազոտական և վերլուծական կարողությունների ձևավորմանը և գործնական հմտությունների ձեռքբերմանը միտված հանձնարարականների սակավությունը։
4) Դասախոսական կազմի առաջընթացի և խրախուսման հստակ մեխանիզմների բացակայությունը։
5) Նեղ մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների անկատարությունը և բազմաոլորտ ծանրաբեռնվածությամբ դասվանդողների առկայությունը։

6) Հետազոտական ուղղության զարգացման քաղաքականության և գործընթացների բացակայությունը։
8) Հասարակության կարիքների հենքով միջոցառումների սակավությունը։
9) Կրթական կարիքների և համապատասխան ռեսուրսների ապահովման ու ֆինանսական մուտքերի բազմազանեցման անհրաժեշտությունների բավարարման համար թույլ արտաքին կապեր։
10) Արտաքին կապերի, տեղի և միջազգային փորձի ուսումնասիրումը խթանող և խրախուսող մեխանիզմների բացակայությունը։
11) Որակի ապահովման համակարգի անկատարությունը, շահակիցների թույլ ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում։
12) Համակողմանի տվյալների և հետազոտությունների հենքով վերլուծությունների բացակայությունը։

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) Հստակեցնել առաքելությունը, հնարավորություններն ու նպատակները՝ հենված տարածաշրջանի կարիքների համակողմանի վերլուծության, ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակի ներգրավմամբ։
2) Ապահովել ըստ ճշգտված նպատակների իրագործելի ՌԾ և դրա ընթացիկ և ամփոփիչ գնահատման գործընթաց ըստ սահմանված չափելի գնահատման առանցքային ցուցանիշների՝ ուղղված քոլեջի շարունակական զարգացմանը։

Կառավարումն ու վարչարարությունը

3) Ապահովել արդյունավետ կառավարման համակարգ՝ շահակիցների լայն շրջանակի ներգրավմամբ, ֆինանսական մուտքերի բազմազանեցմամբ (այդ թվում՝ արտաքին կապերի շրջանակի ընդլայնմամբ և բովանդակային վերանայմամբ) և ռեսուրսների կատարելագործմամբ, որը կապահովի քոլեջի շարունակական զարգացումը։
4) Ապահովել ռազմավարական կառավարման գործընթաց, ինչպես պլանավորման (նաև՝ ԳԱՑ-երի սահմանմամբ) և իրականացման, այնպես էլ գնահատման և այդ հենքով բարելավման փուլերով՝ երաշխիքներ ստեղծելով ռազմավարական նպատակների իրագործման համար։ Ապահովել որակի կառավարման սկզբունքը նաև այլ տարբեր գործընթացներում։
5) Ապահովել հաշվետվողականություն՝ համակողմանի տվյալների (նաև՝ իր գործունեության վրա ազդող գործոններով պայմանավորված) և հետազոտությունների հենքով վերլուծություններով, որոնք կնպաստեն խնդիրների վերհանմանն ու քոլեջի գործընթացների շարունակական բարելավման ապահովմանը։
6) Ապահովել կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակայնություն (կարևորելով նաև լավ փորձի բացահայտումը, շրջանավարտների հաջողությունները և այլն)։

Մասնագիտության կրթական ծրագրերը

7) Ապահովել ՄԿԾ-ների բովանդակության և պրակտիկաների գործընթացի շարունակական բարելավում՝ հենված նմանատիպ ՄԿԾ-ների լավագույն փորձի,

աշխատաշուկայի, գործատուների կարծիքների և այլ ուսումնասիրությունների վրա։

8) Ապահովել հետազոտական և վերլուծական կարողությունների ձևավորմանը և գործնական հմտությունների ձեռքբերմանը միտված հանձնարարականներ՝ տեսություն-պրակտիկա կապի պահպանման համատեքստում։

Ուսանողները

9) Վերահմաստավորել Ուսանողական խորհրդի գործունեությունը՝ ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ կոնկրետ միջոցառումներ իրականացնելով։

10) Ներդնել կրթական կարիքների վերհանման և կրթական խորհրդատվական և այլ ծառայությունների արդյունավետության գնահատման և վերլուծության հստակ մեխանիզմներ։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

11) Վերանայել դասախոսական և ՈւՕ կազմերի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները և ներգրավել նեղ պրակտիկ ոլորտի մասնագետներ՝ բազմաոլորտ ծանրաբեռնվածությունը կանխելու նպատակով։

12) Ներդնել դասախոսական և ՈւՕ կազմի մասնագիտական որակների գնահատման, կարիքների վերհանման, վերապատրաստումների պլանավորման, առաջընթացի ու խրախուսման հստակ և գործուն մեխանիզմներ՝ ապահովելով գործընթացների թափանցիկություն։

Հետազոտությունը և զարգացումը

13) Սահմանել Քոլեջի հետազոտական ուղղությունները, խնդիրները, դրանց լուծման ուղենիշները և գնահատման հիմնական ցուցիչները՝ Քոլեջի ներուժի գնահատման և արտաքին շահակիցներին ներգրավման հիման վրա։

14) Կրթական ծրագրերում ընդլայնել հետազոտական բնույթի հանձնարարականների իրականացման հնարավորությունները ուսանողների վերլուծական ու քննադատական մտածողության, հետազոտական կարողությունների զարգացման համար։

15) Ներդնել դասախոսներին հետազոտական աշխատանքներում (մեթոդական աշխատանքներ, իրենց դասավանդման փորձի ուսումնասիրում և այլն) ներգրավելու և խրախուսման հստակ մեխանիզմներ։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

16) Արտաքին շահակիցների կամ ԿԽ միջոցով փորձել ծրագրեր բերել քոլեջ և դիվեսիֆիկացնել բյուջեն, որ հնարավոր լինի ՌԾ բոլոր նպատակներն իրագործել։

17) Ներդնել ռեսուրսների կիրառելության և հասանելության գնահատման մեխանիզմներ՝ ձեռնարկել արտաքին շահակիցների հետ համատեղ ռեսուրսների կիրառում, և ապահովել դրանց հենքով շարունակական բարելավումը։

Հասարակական պատասխանատվությունը

18) Տարածաշրջանային քոլեջ լինելով, գիտելիքների և արժեքների փոխանցման միջոց դիտարկել կարճաժամկետ լրացուցիչ ծրագրերը՝ միտված տարածաշրջանի կարիքների բավարարմանը։

19) Արտաքին շահակիցների ակտիվ ներգրավածությունն ապահովելու և հասարակության իրազեկելիության նպատակով գործընթացները դարձնել ավելի թափանցիկ և հաշվետվություններում ավելացնել վերլուծական բաղադրիչը։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

20) Հստակեցնել արտաքին կապերի ուղղություններն ու նպատակները՝ կարևորելով կրթական կարիքներն ու համապատասխան ռեսուրսների ապահովումը, ինչպես նաև ֆինանսական մուտքերի բազմազանեցումը։

21) Ներդնել արտաքին կապերի, տեղի և միջազգային փորձի ուսումնասիրումը խթանող և խրախուսող մեխանիզմներ և ապահովել համապատասխան լեզվահմացություն՝ ուղղված կրթական ծրագրերի շարունակական բարելավմանն ու արդիականացմանը։

Որակի ներքին ապահովման համակարգը

22) Մշակել և ներդնել որակի ապահովման ներքին համակարգ (որակի ապահովման գործընթացներում տարբեր օղակների դերերի որոշակիացմամբ)՝ հենված լավ փորձի, ինչպես նաև քոլեջի առանձնահատկությունների և հնարավորությունների վրա, և ապահովել համապատասխան գործառնական փաստաթղթային հենք՝ ուղղված քոլեջում որակի ապահովման մշակույթի գործընթացների իրագործմանն ու զարգացմանը։

23) Ապահովել քոլեջի գործունեության տարբեր ոլորտների ուղղությամբ բազմակողմանի տվյալների հավաքագրման և համակողմանի վերլուծության գործընթաց՝ ուղղված այդ ոլորտների զարգացմանն ու նպատակների իրագործմանը։ Ապահովել այս գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունն ու հետադարձ կապով արդյունքների վերաբերյալ իրազեկվածությունը։

_____

Արմենուհի Սարգսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

5 դեկտեմբերի, 2023թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

1. **Արմենուհի Սարգսյան՝** Ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Նարինե Միրականյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ, ծրագրերի ղեկավար, փորձագիտական խմբի անդամ,
3. **Մեղա Խաչատրյան՝** Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ, դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
4. **Միքայել Գրիգորյան՝** Հայաստանում ֆրանսիական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ տնօրենի օգնական **Լիանա Ալավերդյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԳՏՊՔ-ը 13.01.2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո ԳՏՊՔ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հաշվի առնելով ուսումնական հաստատության առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը առցանց աշխատաժողովներ է իրականացրել հավատարմագրվող ՄԿՈ հաստատությունների հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները: Ուսումնական հաստատությունն իրականացրել է փորձնական SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ–ի պահանջներին ստուգելու նպատակով: Ինքնավերլուծությունը ՈԱԱԿ է ներկայացվել 05.05.2022թ.:

Նախապատրաստական փուլ

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանաջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3.ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում,
4.նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի

պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն ուսումնասիրել են ուսանողներին տրվող հանձնարարականները, իրականացրել են դասալսումներ՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

Նախանական այց

2023թ. սեպտեմբորի 11-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել ԳՏՊՔ-ի ղեկավար կազմի հետ: Հանդիպումներին ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը:

Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. սեպտեմբերի 18-21-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցին նախորդող շաբաթվա ընթացքում փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողն այցելել են քոլեջ, դիտարկել քոլեջի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները[3], իրականացրել դասալսումներ: Այնուհետև փորձագետներն ու համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[4]:

---

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
[3] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 06.11.2023 թ.-ին: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրել է փորձագետներին: Այնուհետև ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են հաստատության դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Հաշվի առնելով այդ դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 05.12.2023թ.-ին:

Լիանա Ալավերդյան
Փորձագիտական խմբի համակարգող

5 դեկտեմբերի, 2023թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Պատմություն**. «Գեղարքունիքի տարածաշրանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, հայրենական կրթական համակարգի մի մասնիկն է, որի հիմնական առաքելությունն է գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների մոտ ազգային մտածելակերպի ձևավորումը: Քոլեջի նպատակն է սովորողների մոտ ձևավորել հասարակության մեջ ավելի բարձր մակարդակի հասնելը, ինչպես նաև հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ակտիվ մասնակցության դրսևորումը:

   Քոլեջը հիմնադրվել է 1972թ. որպես «Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկումի Մարտունու մասնաճյուղ» 1977թ. կազմավորվել է որպես ինքնուրույն՝ «Մարտունու ինդուստրիալ - տեխնոլոգիական տեխնիկում»: 2001թ. վերանվանվել է «Մարտունու պետական քոլեջի»-ի: 2002թ. քոլեջին միացել է «Երևանի պետական հումանիտար քոլեջի Մարտունու մասնաճյուղը»-ը: 2011թ. վերանավանավել է «Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի և նույն թվականին քոլեջին միացել է «Մարտունու արհեստագործական ուսումնարանը» ՊՈԱԿ-ը:

   Այսօր Քոլեջն ընդգրկված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության տասներկու տարածաշրջանային քոլեջների շարքում և իրականացնում է բազմաճյուղային միջին և նախնական / արհեստագործական / մասնագիտական ծրագրեր, որտեղ ուսանում են թվով 335 ուսանողներ ՝ առկա և հեռակա ուսուցմամբ:

2. **Կրթություն.** Քոլեջն ուսումնական պարապմունքները անցկացնում է 2 մասնաշենքերում, ունի վերանորոգված և կահավորված մարզասրահ, մարզադահլիճ և 0.9031 հա հողատարածք: Կրթօջախն իր բազմամյա գործունեության ընթացքում պատրաստել է մոտ 30 մասնագիտությունների գծով ավելի քան 5800 մասնագետներ, որոնք աշխատում են տարածաշրջանի, հանրապետության և ԱՊՀ-ի տնտեսությունների տարբեր ոլորտներում: Ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում, արձագանքելով աշխատաշուկայի պահանջներին, դարձել է բազմագործառութային բնույթի կրթօջախ:

   Քոլեջը ներկայումս մասնագիտացել է հաշվողական տեխնիկայի, հաշվապահական հաշվառման, սոցիալական աշխատանքի, նախադպրոցական կրթության, մենեջմենթի /Կառավարման / և նախնական /արհեստագործական/ մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստման գործում: Քոլեջն ընդգրկված է «ԵՄ հարևանության քաղաքականության» ծրագրի շրջանակներում ՀՀ ՄԿՈՒ համակարգին ուղղված բյուջետային աջակցության ծրագրում, որը հիմնականում նախատեսված է քոլեջի նյութական և ուսումնամեթոդական հագեցվածության ապահովմանը:

3. **Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում.** Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ Քոլեջը նպատակային է դիտարկում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային

չափանիշներին համադրելիությունը, ուսումնական գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաև մատչելիությունն ու հավասարությունը: Այս ամենն անհնար է իրականացնել առանց ուսումնառության և հետազոտական մասի մեկտեղմամբ, ինչն էլ ապահովում է պրակտիկ հմտությունների ձեռքբերումը սովորողների մոտ:

4. **Արտաքին կապեր.** Քոլեջի տնօրինությունը և կարիերայի կենտրոնը ակտիվ աշխատանքներ են տանում ընդլայնելու և ստեղծելու հասարակական կապեր գործատուների, այլ կազմակերպությունների հետ: Քոլեջն ունի հաստատված համագործակցության հուշագրեր, ըստ որոնց կազմակերպությունների միջև հաստատվել է գործընկերային հարաբերություններ: Քոլեջը համագործակցում է տարածաշրջանի դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների հետ:

Ձևավորված է տարիներ շարունակ գործող ու զարգացող սոցգործընկերություն տարածաշրջանում ճանաչված կազմակերպությունների ու ձեռնարկությունների հետ: Քոլեջն այս պահին չունի միջազգային ուսումնական հաստատությունների հետ կնքված պայմանագրեր: Բայց առաջին քայլերն արվում են կնքելու համաձայնագրեր՝ պարբերաբար մասնակցում է Erasmus + -ի կողմից կազմակերպված քննարկումներին:

5. **Որակի ապահովում.** Քոլեջում որակի ապահովման քաղաքականությունը և կանոնակարգը ներկայացնում են կրթության որակի բարձրացմանը նպատակաուղղված հիմնախնդիրների բացահայտումը: Դրանք նախատեսում են որակի ներքին ապահովման համակարգի շրջանակներում նախապատրաստել և իրականացնել Քոլեջի կրթական ծրագրերի և դրանք իրականացնող ստորաբաժանումների գործունեության ինքնավերլուծություն, որակի ներքին արդյունքների գնահատման արդյունքների հիման վրա պլանավորել և իրականացնել ուսուցման որակի բարձրացման միջոցառումներ, ապահովել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ դասավանդման և ուսումնառության որակի և արդյունավետության շարունակական բարձրացման համար:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր:

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջը (այսուհետ՝ ԳՏՊՔ) իրականացնում է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր ըստ ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակների: ԳՏՊՔ-ի առաքելությունը սահմանվում է 2020-2025 թթ.-ի ՌԾ-ով, ընդ որում, քոլեջը սահմանում է բավականին հավակնոտ առաքելություն և նպատակներ: ԳՏՊՔ-ի հիմնական առաքելությունն է՝ գիտելիքի ստեղծում, փոխանցում և տարածում, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորում, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստում, որակյալ մասնագետների պատրաստում տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճի ապահովում, տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժի զարգացում:

Քոլեջը միևնույն ժամանակ ընդգծում է հետևյալ նպատակը. դառնալ ՀՀ մասնագիտական կրթական համակարգի զարգացման և տարածաշրջանային բազմագործառութային կենտրոն՝ ստանձնելով կրթական բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը՝ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստումը աշխատաշուկայի պահանջներին ու անձի պահանջմունքներին համապատասխան: ՌԾ-ում առկա են նաև խնդիրներ, սակայն առկա չէ գործողությունների պլան:

ԳՏՊՔ-ն իր գործունեությունը ծավալում է ըստ 2022-2027 թթ.-ի զարգացման ծրագրի, որը կազմվել է քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի մասնակցելու նպատակով: Փաստաթղթում ներկայացված են քոլեջի թույլ և ուժեղ կողմերը, նշված է նույն առաքելությունը, առանձնացված են 5 հիմնախնդիրներ և լուծման ուղիներ, գործողություններ, դրանց համար նշվում են որոշ արդյունքներ և ժամկետներ, որոնք սակայն ամբողջությամբ չեն արտահայտում առաքելությամբ և նպատակներով սահմանված հավակնությունները, առկա չեն չափելի ցուցիչներ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՌԾ-ի և զարգացման ծրագրի գնահատումներ առկա չեն:

Քոլեջը որպես արտաքին շահակիցներ դիտարկում է գործատուներին, շրջանավարտներին և ծնողներին, իսկ որպես ներքին շահակիցներ՝ ուսանողներին, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նոր կրթական ծրագրեր ներդնելիս քոլեջի ղեկավար կազմը որոշակիորեն դիտարկում է գործատուների պահանջները, քոլեջի ռեսուրսային բազան և տվյալ ոլորտի այլ մասնագետների ներգրավման հնարավորությունները: Տարածաշրջանի կարիքները որոշակիորեն հաշվի են առնվում նաև համայնքային կառույցների հետ համագործակցության և կառավարման խորհրդում ներգրավված արտաքին շահակիցների կարծիքների փոխանակման շնորհիվ: Սակայն վերոնշյալ դիտարկումներ առկա են միայն որոշ առանձին դեպքերում, առկա չեն

բազմակողմանի ուսումնասիրություններ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են դեպքեր, երբ նոր ներդրված կրթական ծրագրով ընդունելություն չի ապահովվել (մասնավորաբար՝ Գրադարանային գործ)։ Առկա են գործող կրթական ծրագրեր, որոնց ուղղությամբ գործատուներ մարզում չկան (մասնավորաբար՝ Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում)։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասավանդողները հիմնականում իրազեկ չեն ՌԾ նպատակներից։

Քոլեջը սկսել է հարցումներ իրականացնել ծնողների, գործատուների, ուսանողների և դասախոսների շրջանում, սակայն դրանք դեռևս ՌԾ նպատակներում արտացոլում չեն ունեցել։

Քոլեջում որպես ՌԾ գնահատման մեխանիզմ կարելի է որոշակի առումով դիտարկել հաշվետվությունները, որոնք, սակայն առանձնակի չեն կապակցվում ՌԾ արդյունքների հետ։ Միաժամանակ փորձագիական այցից պարզվեց, որ կառավարման խորհրդի անդամները տնօրենի տարեկան հաշվետվությունը գնահատելիս չեն առաջնորդվում ՌԾ նպատակներով։ Դեռևս առկա չեն գնահատումների հենքով բարելավման գործընթացներ։

Դատողություններ։

Փորձագիտական խումբը նշում է, որ ԳՏՊՔ-ն կրթություն է իրականացնում ՈԱՇ-ին համապատասխան։ Քոլեջի առաքելությունը համահունչ է ՈԱՇ-ի համապատասխան մակարդակներին։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը սահմանել է որոշակի առաքելություն, նաև անհերքելի է, որ ԳՏՊՔ-ն անփոխարինելի դեր ունի մարզի, դրանով իսկ՝ ՀՀ-ի համար, սա նաև փաստում են արտաքին և ներքին շահակիցները։ Միևնույն ժամանակ քոլեջի առաքելության հստեկեցումը և իր կարիքներին միտված հավակնությունների սահմանումը կնպաստի քոլեջի դերի հստեցկացմանը տարածաշրջանում։ Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը որոշակիորեն հաշվի է առնում ներքին և արտաքին շահակիցներից ստացված տեղեկատվությունը և դա կարող է ազդեցություն ունենալ նպատակների ձևավորման վրա։ Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ աշխատաշուկայի համակողմանի ուսումնասիրությունների բացակայությունը և ՌԾ նպատակների ձևավորմանը շահակիցների լայն շրջանակի ներգրավվածության բացակայությունը կարող է հանգեցնել գերակա ուղղությունների և նպատակների ոչ ճշգրիտ սահմանման, ինչպես նաև՝ մի շարք հնարավորություններ չդիտարկելուն։ Ինչն էլ հանգեցնում է ոչ նպատակային գործընթացների և ուսանողների պրակտիկ կարողությունների ձևավորման խնդիրների։

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ, քոլեջը կարևորել և մշակել է ՌԾ 2020 թ.-ից։ Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ-ն դեռևս չի վերածվել գործառնական փաստաթղթի, առկա չեն դրա իրականացման ընթացիկ գնահատումներ։ Տարեկան հաշվետվությունների նկարագական բնույթը և ՌԾ-ի հետ փոխկապակցվածության բացակայությունը կարող են խոչընդոտել ՌԾ-ով նախատեսված վերջնական նպատակների իրագործելիությունը։ Միաժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում ՌԾ արդյունքների գնահատման ցուցանիշների սահմանումը, որը կօգնի գնահատել ՌԾ նպատակների իրականացման ընթացքը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՏՊՔ-ն առանձնակի առաքելություն ունի տարածաշրջանի համար, ունի ՌԾ, որն արտահայտում է քոլեջի հիմնական նպատակները, որոնք համահունչ են ՈԱՇ-ին, կարևորում է ներքին և արտաքին շահակիցների կարիքները և ընդլայնում է դրանց վերհանման մեխանիզմները, ինչպես նաև կարևորել է հաշվետվողականության մեխանիզմի ներդրումը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր:

ԳՏՊՔ-ում գործում է 2012 թ.-ին նոր խմբագրությամբ հաստատված և 2021 թ.-ին փոփոխություններ և լրացումներ կատարված կանոնադրություն, ըստ որի սահմանվում են կառավարման մարմինները՝ կոլեգիալ մարմինը քոլեջի կառավարման խոհուրդն է, գործադիր մարմինը՝ տնօրենը: ԿԽ-ի գործունեությունը կանոնակարգվում է ըստ համապատասխան կանոնադրության և տարեկան աշխատանքային պլանի:

Քոլեջն ունի հիերարխիկ կառուցվածք, որն արտահայտում է ստորաբաժանումների անմիջական ենթակայությունները: Առկա է քոլեջի տնօրենի պաշտոնի նկարագիր և քոլեջի աշխատանքային պլան:

Քոլեջն ունի Ուսանողական խորհուրդ, որն ունի իր ներկայացուցիչները (3 հոգի) կառավարման խորհրդում: Ըստ կանոնադրության սահմանված են ՈՒԽ-ի գործառույթները, սակայն դրանք ներկայացվում են որպես առաքելություն: ՈՒԽ-ն առաջնորդվում է ըստ 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի:

ԳՏՊՔ-ում առկա է Մանկավարժական խորհուրդ և Ուսումնամեթոդական խորհուրդ (վերջինս առանձին չէ, այլ ներառված է մանկավարժական խորհրդի և ամբիոնների մեջ):

Քոլեջի տնօրենի տեղակալը կազմակերպում և վերահսկում է ուսումնական գործընթացը, ապահովում ուսանողների ներկայությունը, կարգապահությունը, կազմակերպում տարբեր միջոցառումներ, պահպանում ծնողների կապը քոլեջի հետ, հետևում դասախոսների և ուսանողների շարժին:

Քոլեջն ունի 2 ամբիոն, Կարիերայի կենտոն, Կադրերի բաժին, Որակի ապահովման ներքին կենտրոն, Գրադարան, Արխիվ, Հաշվապահական հաշվառման ստորաբաժանում: Ստորաբաժանումներն ունեն կանոնակարգեր, երբեմն նաև կանոնակարգին զուգընթաց գրեթե նույնաբովանդակ կանոնադրություն: Առկա են բոլոր պաշտոնների նկարագրեր և աշխատանքային պլաններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են դեպքեր, երբ 1 անձը զբաղեցնում է մի քանի տարաբնույթ պաշտոններ (մասնավորաբար՝ Հաշվետար, ամբիոնի վարիչ և Որակի ապահովման կենտրոնի տնօրեն, Կադրերի բաժնի վարիչ և

Պրակտիկայի բաժնի վարիչ, Հեռակա բաժնի ղեկավար և Հանրակրթական ու հումանիտար առարկաների մեթոդ միավորում) և դրա հետ մեկտեղ նաև դասավանդում են: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առկա չէ մեկ անձի կողմից այդ բոլոր ուղղություններով արդյունավետ աշխատանքի գնահատման ցուցանիշներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի մի շարք գործընթացների (կրթական ծրագրերի վերանայում, դրա հետ կապված քննարկումներ և այլն) վերաբերյալ դասավանդողները իրազեկ չեն, ամբիոնների վարիչները հիմնականում իրենց կողմից դասավանդվող դասընթացների շրջանակում են պատասխանատվությունը դիտարկում և այլ առանձին դասավանդողների կողմից իրականացվող գործընթացներից մեծամասամբ իրազեկ չեն: Կամ դժվարություն է տարբեր կրթական ծրագերի պատասխանատվության ստանձնումը, քանի որ տվյալ ոլորտի մասնագետ չեն:

Քոլեջում առկա է 2016 թ-ին հաստատված ներքին կարգապահական կանոններ, որով սահմանվում են աշխատակիցների և սովորողների հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

Քոլեջում ֆինանսական ռեսուրսներն առաջանում են հիմնականում պետական ֆինանսավորումից՝ շուրջ 90% ընդհանուր ֆինանսավորում, շուրջ 8% կրթաթոշակ: Ֆինանսական հիմնական հատկացումները տրամադրվում են աշխատավարձի վճարման համար՝ շուրջ 87%, կրթաթոշակ շուրջ 8%:

Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջը ֆինանսական մուտքերի ավելացումը կապում է ուսանողների թվի ավելացման հետ: Որպես ֆինանսական մուտքերի բազմազանեցման հնարավոր տարբերակ դիտարկվում է կարճաժամկետ ծրագրերի իրականացումը, ինչը վերջին տարիներին քոլեջը չի կարողացել իրականացնել, որն էլ պայմանավորեցվում է նախ համավարակով և պատերազմով, ապա նաև կազմակերպչական որոշ դժվարություններով: Փորձագիտական այցից պարզվեց, որ արտաքին կապերի շրջանակի և բովանդակության վերանայման արդյունքում կարող են ի հայտ գալ ֆինանսական մուտքերի բազմազանեցման և ռեսուրսների համալրման նոր հնարավորություններ:

Քոլեջն ընդգրկված է Եվրամիության կողմից միջին մասնագիտական կրթությանն ուղղված բյուջետային աջակցության ծրագրում, որի արդյունքում երբեմն նյութատեխնիկական բազայի համալրումներ են իրականացվում:

Քոլեջի դասախոսական, ուսումնաօժանդակ կազմը և ուսանողները ընդգրկված են ուսումնամեթոդական խորհրդի, մանկավարժական խորհրդի և կառավարման խորհրդի կազմերում: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ նրանց կողմից հարցեր չեն բարձրացվում: Միաժամանակ նիստերի օրակարգերում ընդգրկված հարցերը չեն քննարկվում դասախոսական և ուսանողական առավել լայն շրջանակի հետ՝ խորհրդում նրանց ձայնը բարձրացնելու նպատակով: Փորձագիտական այցից պարզվեց, նաև, որ դասախոսներն ու ուսանողները հիմնականում իրազեկ չեն կայացված որոշումներից:

Քոլեջում առկա է 2020-2025 թթ.-ի ռազմավարական ծրագիր, որի համար սակյան չի մշակվել գործողությունների ծրագիր: Առկա է 2022-2027 թթ.-ի Զարգացման ծրագիր, որին կից նաև՝ գործողությունների ծրագիր, ըստ որի նախատեսված է 6 գործողություն՝

1. Մասնագիտական վերապատրաստումներ, երիտասարդ կադրերով համալրում,
2. Քոլեջի արդյունավետ կառավարման կառուցվածքի սահմանում, գործարկում,
3. Տրակտորիստ-մեքենավարի կարճաժամկետ ուսուցում, նոր մասնագիտությունների ներդնում,

4.Նյութատեխնիկական բազայի հաշվառում /գույքագրում/, շենքային պայմանների բարելավում,

5. Նոր գործընկերների հետ պայմանագրերի կնքում,

6. ՄՄԾ-ի հետ հանդիպումների և քննարկումների հաճախակի անցկացում:

Քոլեջը նախանշել է որոշ արդյունքներ: Պլանավորման ժամկետները հիմնականում նշվում է շարունակական , առկա չեն արդյունքի գնահատման ցուցանիշներ և ֆինանսական բաշխում ըստ նպատակների: Որպես կարճաժամկետ պլաններ հանդես են գալիս ստորաբաժանումների և քոլեջի պլանները ըստ ուսումնական տարիների, որոնցում, սակայն, հիմնականում կանոնակարգային գործառույթների հենքով պարբերական գործողություններն են և չեն կապակցվում ՌԾ գործողությունների հետ, հաճախ դրանք ըստ տարիների նույնիսկ չեն տարբերվում: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջում էական փոփոխություններ չեն եղել, շատ պարագաներում քոլեջի կողմից ձեռքբերում է համարվում եղածի պահպանումը:

Կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են տարեկան հաշվետվություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետության գնահատում չի իրականացվում: Տնօրենը, տարեկան գործունեության ամբողջական կատարողականի վերաբերյալ յուրաքանչյուր տարվա ավարտին հաշվետվություն է ներկայացնում Կառավարման խորհրդի նիստում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ստորաբաժանումների համար 2017 թ.-ից է ներդրվել հաշվետվողականության համակարգը, որոնք առավելագույնը 1 էջանոց նկարագրական փաստաթղթեր են[5]: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ նաև, որ տնօրենի հաշվետվությունը ևս նկարագրական բնույթի է և չի պարունակում վերլուծություններ կամ առկա չեն ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա վերլուծություններ, ինչպես նաև չկան քոլեջի գործունեության բոլոր ուղղությունների վերաբերյալ տվյալներ: Հաշվետվություններում բացահայտված խնդիրներ ևս չկան, որոնք հաջորդ տարիների պլաններում որպես լուծելի խնդիր կարող են հանդես գալ: Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ Կառավարման խորհրդում հաշվետվությունների գնահատման ժամանակ անդրադարձ չի կատարվում ըստ աշխատանքային պլանների կամ ՌԾ նպատակերի գործընթացների իրականացմանը:

Քոլեջը որպես իր գործունեության վրա ազդող արտաքին գործոն դիտարկում է ընդունելությունը, ֆինանսավորման համակարգը, աշխատաշուկայի և հասարակական պահանջները, օրենսդրական փոփոխությունները: Քոլեջը դիտարկում է ընդունելության արդյունքները, քանի որ անմիջապես դրա արդյունքներով է պայմանավորված քոլեջի ֆինանսավորումը: Քոլեջը ներկայացրել է աշխատաշուկայի ուսումնասիրության վերաբերյալ տեղեկատվություն և որպես աշխատաշուկայի վերլուծություն դիտարկում է գործատուների հետ առանձին հանդիպումները, սակայն ակայն քոլեջում չի իրականացվել աշխատաշուկայի վերլուծություններ, չկան ընդունելության կանխատեսելիության, որոշակի երաշխիքների ապահովման, ռիսկերի կառավարման մոտեցումներ[6]: Առկա են դեպքեր, երբ կրթական ծրագրերը ներդրվել են առանձին գործատուների հետ կապի արդյունքում, սա նաև հանգեցրել է ոչ տեղին որոշումների կայացման, երբ ներդվել է կրթական ծրագիր, ըստ որի դիմորդներ չեն եղել, առկա են նաև դեպքեր, երբ հաջողել են (մասնավորաբար՝ Սոցիալական աշխատանք):

[5] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

[6] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

ԳՏՊՔ-ում տվյալների հավաքագրման համար անցկացվում են հարցումներ ուսանողների շրջանում, սակայն դրա միջոցով վեր հանված առավել կարևոր խնդիրը դիտարկվում է առաջին հարկում թույլ լուսավորության հարցը: Հարցումների արդյունքում ներկայացվել են նաև այլ խնդիրներ (ռեսուրսային, սանիտարահիգիենիկ և այլն), սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջի կողմից դրանք չեն դիտարկվել:

Կարիերայի կենտրոնը մի շարք վիճակագրական տվյալներ և ցուցանիշներ է ներկայացնում ըստ պահանջի: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջում դրանք չեն ենթարկվում հետագա վերլուծությունների:

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջում առկա չեն նաև այլ հետազոտություններ, վերլուծություններ, որոնք որոշումների կայացման հիմք են հանդիսացել:

Քոլեջում փաստաթղթերը մեծամասամբ հաստատվել են 2016 թ.-ին, որոնք մշակվել են բուհերի համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրման հենքով: Փորձագիտական այցից պարզվեց, որ մշակված փաստաթղթերը հիմնականում գործառնական բնույթ չեն կրել և քոլեջը, այժմ գիտակցելով այդ հանգամանքը, ձեռնարկել է որոշ փոփոխությունների իրականացում: Միաժամանակ պարզվեց, որ այդ փոփոխությունները դեռևս վերաբերում են որոշ ստորաբաժանումների կանոնակարգերում սահմանված գործառույթների մասնակի փոփոխություններին, երբ նկատի են առնում, թե իրականում ինչ գործառույթներ են իրականացնում:

Կրթական ծրագրերի վերաբերյալ քոլեջը որոշակի տեղեկատվություն է հավաքագրում, մասնավորապես՝ ընդունելության, շրջանավարտների՝ աշխատանքով ապահովվածության վերաբերյալ, առկա են հարցումներ՝ դասախոսների և ռեսուրսների գնահատման վերաբերյալ, ինչպես նաև իրականացնում են դասալսումներ: Սակայն այս տեղեկատվության հիման վրա չկան իրականացված վերլուծություններ (միայն դասախոսների գնահատումների միջին միավորներն են հաշվարկվում) և չկան այդ մեխանիզմների ադյունավետության գնահատման արդյունքներ ու դրանց հենքով բարելավումներ:

Քոլեջի կայքում առկա են վերջին ուսումնական տարվա հաշվետվությունները:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը գնահատում է, որ քոլեջը գիտակցել է կառավարման համակարգի կանոնակարգված գործունեության կարևորությունը և մշակել ու ներդրել է մի շարք փաստաթղթեր՝ կանոնակարգեր, կանոնադրություններ, պաշտոնների նկարագրեր՝ սահմանելով գործառութային համապատասխան շրջանակները: Սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ այդ փաստաթղթերը հիմնականում գործառնական բնույթ չեն կրում, և քոլեջի հավաստմամբ ևս դրանք չգիտակցված կերպով են մշակվել՝ նկատի ունենալով բուհերի փորձը: Քոլեջի գործընթացները և դրանց վարչարարությունը դեռևս չի իրականացվում որակի կառավարման սկզբունքի (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) կիրառմամբ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ այս ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկվեն. փաստաթղթերը մշակվեն և ներդրվեն պայմանավորված գործընթացների կանոնակարգման անհրաժեշտությամբ, այդուհետ գործառնություն գտնելով բարելավվեն՝ կարևորելով գործընթացների բարելավումը՝ հիմքում ունենալով որակի կառավարման սկզբունքը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ամբիոնների կողմից կրթական ծրագրերի կառավարման գործընթացը հստակ կանոնակարգված չէ, ինչը կարող է խոչընդոտել կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքների երաշխավորումը:

Փորձագիտական խմբի համար գնահատելի է քոլեջի աշխատակիցների կոլեկտիվ աշխատանքների իրականացման պատրաստակամությունը, սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում բազմաոլորտ զբաղվածությունը, սա հանգեցնում է գործընթացների անադյունավետության դրսևորումների: Թեև քոլեջն այս խնդիրը բացատրում է մարդկային ռեսուրսների սղությամբ և օրենքի սահմաններում բեռնվածության պահպանմամբ, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ գործառույթների տարաբնույթ լինելը երբեմն խոչընդոտում է գործառույթների լիարժեք պատկերացմանն ու իրականացմանը:

Քոլեջը փորձում է եղած ֆինանսական սուղ միջոցներով ապահովել ստորաբաժանումների համար որոշակի տեխնիկական կարիքները, սակայն ՌԾ իրականացման տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է ստորաբաժանումների նաև այլ կարիքների գնահատումն ու դրանց հենքով ռեսուրսների համալրումն ու հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը փորձում է առավելագույն արդյունավետությամբ տնօրինել եղած ֆինանսական ռեսուրսները, սակայն դրա հետ մեկտեղ փորձագիտական խումբը գտնում է, որ հարկավոր է հստակ քայլեր ձեռնարկել ֆինանսական մուտքերի բազմազանեցման ուղղությամբ, այս տեսանկյունից կարևոր է արտաքին (այդ թվում՝ միջազգային) կապերի համապատասխան քաղաքականության իրականացումը և ընդլայնված հնարավորությունների դիտարկումը:

Փորձագիտական խմբի համար նկատելի են քոլեջում կարգապահական ուղղությամբ կատարված աշխատանքները, ինչը նպաստում է, որ գործընթացներն իրականացվեն էթիկայի նորմերին համապատասխան:

Փորձագիտական խումբը փաստում է, որ քոլեջի կառավարմանը կոլեգիալ մարմինների ներգրավվածությունը թույլ է և գլխավորապես ֆորմալ: Կառավարման կոլեգիալությունը լիարժեք արտահայտված չէ, իսկ սա կարող է խոչընդոտել ինչպես իրականության վերաբերյալ ոչ լիարժեք իրազեկվածությանը, այնպես էր նոր հնարավորությունների բացահայտմանը: Վերջինը կարող է հանգեցնել նաև կայացված որոշումների ոչ արդյունավետ իրականացման:

Փորձագիտական խումբը գնահատելի է համարում, որ քոլեջն ունի ՌԾ և փորձել է մշակել նպատակներին հասնելու գործողությունների պլան: Սակայն առկա չէ նախորդ ՌԾ-ի իրականացման գնահատման արդյունքներ և դեռևս չավարտված ներդրվել է նորը: Գործողությունների պլանավորումն էլ հստակ չէ ժամկետային, ռեսուսային և ակնկալվող ցուցանիշների տեսանկյունից: Տարեկան պլանների և ՌԾ գործողությունների կապը արտահայտված չէ: Միաժամանակ նկատելի չէ հաշվետվությունների և ՌԾ կապը: Այս ամենը խնդիրներ է ստեղծում ըստ ռազմավարական նպատակների գործընթացների իրականացման և ռազմավարական նպատակներին հասնելու տեսանկյունից: ՌԾ նպատակների իրագործելիության երաշխավորման տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է ինչպես երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումների, այնպես էլ վերլուծական հաշվետվությունների ու ՌԾ իրականացման գնահատումն ապահովելուն ուղղված գործընթացների ուղղությամբ հստակ աշխատանքների իրականացումը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը փորձում է տարբեր ազդակներով գործունեության վրա ազդող որոշ հանգամանքներ հաշվի առնել, սակայն կարևոր են համակողմանի տվյալների հավաքագրումն ու վերլուծումը, ճիշտ որոշումների կայացման նպատակով:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը կրթական ծրագրերի վերաբերյալ որոշ տեղեկատվություն է հավաքագրում, սակայն այդ մեխանիզմների կամ հավաքագրված տեղեկատվության վերլուծության ու կիրառման մեխանիզմների գնահատման գործընթացներ առկա չեն: Նաև դեռևս առկա չեն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության վերաբերյալ հրապարակումներ ու դրանց գնահատման մոտեցումներ, ինչի արդյունքում տուժում է կրթական ծրագրերի արդյունավետ կառավարման և քոլեջի կորպորատիվ հեղինակության ու տեսանելիության բարձրացման գործընթացները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՏՊՔ-ում կառավարչական որոշումների կայացմանը դեռևս լիարժեք և գործուն մասնակցություն չեն ունենում ներքին շահակիցները, առկա է ռազմավարական պլանավորման և դրա՝ իրականացվող գործընթացների հետ փոխկապակցվածության անհստակություն, բացակայում են ՌԾ գնահատման մեխանիզմները, ռազմավարական նպատակների իրագործելիության առումով նկատելի են ֆինանսական և այլ ռեսուրսների պակաս, առկա չեն քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների համակողմանի ուսումնասիրություններ, փաստաթղթերի և գործընթացների կառավարումը դեռևս հենված չէ որակի կառավարման սկզբունքի վրա, առկա չեն գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման մեխանիզմների, ինչպես նաև կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին հրապարակումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր 5 մասնագիտություններով՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հաշվապահական հաշվառում», «Նախադպրոցական կրթություն», «Սոցիալական աշխատանք» և «Մենեջմենթ (Կառավարում)», ընդ որում՝ վերջին երկուսը ներդրվել են վերջին 5 տարիների ընթացքում: Միաժամանակ՝ «Նախադպրոցական կրթություն» և «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրերը Քոլեջն իրականացնում է նաև ուսուցման հեռակա ձևով:

ԳՏՊՔ-ն իրականացնում է նաև Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության 4 ծրագրեր, որոնք են՝ «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)» հիմնական ընդհանուր հիմքով, «Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (հիմնական ընդհանուր հիմքով)», «Կարի արտադրության տեխնոլոգիա (միջնակարգ լրիվ հիմքով)», «Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում (հիմնական ընդհանուր հիմքով)»:

Համաձայն 2022-2027թթ. զարգացման ծրագրի՝ Քոլեջն ունեցել է նաև մի շարք այլ մասագիտություններ («Իրավագիտություն», «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Բանկային գործ», «Ապահովագրական գործ», «Ջերմատնային տնտեսություն» և այլն), որոնք դիմորդներ չլինելու պատճառով այս պահին չեն գործում: «Գրադարանային գործ» կրթական ծրագիրը քոլեջում նոր է ներդրվել, սակայն դիմորդներ չեն եղել: Հեռակա ուսուցման՝ «Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ըստ տրանսպորտի տեսակների/» կրթական ծրագրերով ևս Քոլեջը դիմորդներ չունի:

Որպես տարածաշրջանային Քոլեջ, ԳՊՏՔ-ի առաքելությունն է պատրաստել մասնագետներ՝ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական պահանջներին համապատասխան: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջը չի իրականացրել աշխատաշուկայի համապարփակ վերլուծություն: ՄԿԾ-երը հիմնականում իրականացվում են ՊԿՉ-ներով, գրեթե առանց շեղումների: Քոլեջն իրականացրել է ՄԿԾ-ները ՈԱՇ-ին համապատասխանեցման փորձ՝ ըստ վերջնարդյունքների, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսական կազմը չի մասնակցել նման աշխատանքների իրականացմանը:

Առկա են ՄԿԾ-երի ուսումնական պլանները, որոնցում ներառված են տեսական և գործնական ժամերը և կամընտրական առարկաները: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ առարկաների ընտրությունը կրում է ֆորմալ բնույթ. առարկաներն ընտրվում են ամբիոնների կողմից:

Առարկայական ծրագրերում ներառված ուսումնառության նյութերը կազմվել են՝ ՊԿՉ-ների հիման վրա դասախոսների կողմից: Տեսական և գործնական ժամերի բալանսը պահպանված է՝ գործնական ժամերի գերակայությամբ՝ ելնելով առարկաների առանձնահատկությունից:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման գործընթացը քոլեջի ռազմավարական ծրագրի խնդիրներից մեկն է: Քոլեջը մշակել է դասավանդման և ուսումնառության մեթոդներ, սակայն դրանք համակարգված բնույթ չունեն և տարանջատված չեն՝ ըստ առանձին կրթական ծրագրերի: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մեթոդների ընտրությունը իրականացնում են դասախոսները՝ իրենց փորձից ելնելով, օրինակ կիրառվել է ելքի տոմսերի մեթոդը, որը նպաստել է ուսանողների կողմից նոր նյութի ընկալմանը: Այնուամենայնիվ փաստենք, որ դրական փորձի վերհանման և տարածման մշակույթը քոլեջում ձևավորված չէ, մասնավորապես՝ մեթոդների ընտրության և կիրառման հարցում: Դասավանդման գործընթացում առկա են նաև ուսուցանվող նյութը թելադրելու փորձեր, իսկ ինտերակտիվ և ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող մեթոդների կիրառումը որպես առաջնահերթություն Քոլեջում չի դիտվում:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա են դեպքեր, երբ ուսանողներին տրվող առաջադրանքները նախապես պլանավորված չեն լինում: Գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ կիրառվում են թեստային առաջադրանքներ, խաղային իրավիճակներ, իրավիճակային վերլուծություններ, ինքնուրույն աշխատանքեր, մշակումներ, ռեֆերատներ, որոնք նպատակ ունեն ամրապնդելու տեսական գիտելիքները, որի հիման վրա զարգանում է նաև ուսանողների գործնական կարողությունները: Օրինակ՝ «Սոցիալական աշխատանք» ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է իրավիճակի վերլուծություններ կամ դեպքի ուսումնասիրություն, սակայն փորձը չի տարածվում:

Առաջդրանքները հիմնականում միտված են գիտելիքների ձերքբերմանն ու ամրապնդմանը: Դրանք հիմնականում չեն նպաստում ուսանողների ստեղծագործական, վերլուծական մտածողության զարգացմանը: Օրինակ՝ ՄԿԾ-երի մոդուլների յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի ավարտին տրվում են գրավոր աշխատանք՝ թեստերի, հարցարանների ձևով, որոնք ներառում են ճիշտ և սխալ տարբերակների համապատասխանեցումներ, լրացումներ պարունակող առաջադրանքներ, բաց հարցեր՝ «Երեխայի ավտոնոմ խոսքի եռակի ծագման որ տարբերակն է սխալ» (Սոցիալական աշխատանք), «Ինչպես մասնատել աղյուսակի բջիջները» (Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում): «Նախադպրոցական կրթություն» ՄԿԾ-ի շրջանակում ուսումնասիրվում են խաղեր (Օրինակ՝ դասավորել հաշվեձողիկները 2 խմբով, մի մասում 10 հատ, մյուսում՝ 2: Հարցրեք՝ որ մասում ավելի շատ հաշվեձողիկ կա: Կամ ցույց տուր այն հաշվեձողիկը, որը դեղին չէ), սակայն այցից պարզ դարձավ, որ դրանցում չի շեշտադրվում սովորեցնելու մեթոդիկան: Ռեֆերատները, կուրսային աշխատանքները, նախաավարտական պրակտիկայի հաշվետվությունները և մյուս առաջադրանքները ևս ունեն վերարտադրողական բնույթ:

Քոլեջն իրականացնում է ուսումնական, արտադրական, նախաավարտական պրակտիկաներ, որի ընթացքում ուսանողները ձեռք են բերում գործնական հմտություններ: Կրթական ծրագրերի ուսանողների պրակտիկաներն իրականացվում են համապատասխան վայրերում, բացառությամբ՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրի ուսանողների: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրի շրջանակում պրակտիկայի համապատասխան վայրեր չկան և ուսանողները պրակտիկան անցկացնում են տարբեր կազմակերպություններում և իրականցնում են հաշվապահական հաշվառմանը վերաբերող աշխատանքեր: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ գործնական հմտությունների ձեռք բերման տեսանկյունից պրակտիկաներերը ավելի շատ են կարևորվում, սակայն ժամաքանակի ավելացման կարիք նկատվում է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուները ևս կարևորում են գործնական կարողությունների բարձրացումը՝ միաժամանակ ընդգծելով ուսանողների պատրաստվածությունը տեսական գիտելիքների մասով: Պրակտիկայի ավարտին ուսանողները գնահատվում են՝ նշանակված պրակտիկայի ղեկավարի կողմից և միաժամանակ գործատուի կողմից նաև տրվում է եզրակացություն: Գնահատվում է նաև նախաավարտական պրակտիկայի հաշվետվությունը, որը առաջադրանք է տվյալ մոդուլի շրջանակում որևէ թեմայի վերաբերյալ: Օրինակ նմանատիպ առաջադրանքներից են Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման ծրագրի շրջանակում՝ համակարգչային ցանցերի կառուցվածի, Նախադպրոցական կրթության

ծրագրի շրջանակում՝ մանկապարտեզում դաստիարակության համար կիրառվող մեթոդների վերաբերյալ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ատեստավորման հանձնաժողովի նախագահների կողմից շեշտադրվել է, որ ուսանողներն ունեն տեսական գիտելիքները գործնականում կիրառելու խնդիրներ՝ շեշտադրելով նաև արդիական ծրագրերի իմացությունն ու մոտեցումները, օրինակ հաշվապահական կիրառական ծրագրերից: Հանձնաժողովների նախագահների եզրակացություններ առկա են ոչ բոլոր ՄԿԾ-ներից: Քոլեջի կողմից չի իրականացվել առաջադրանքների արդյունավետության գնահատման ուղղությամբ քայլեր: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջը չի կատարել մասնագիտությունների կրթական ծրագրերի, այդ թվում՝ նաև առարկայական ծրագրերի մասով առաջավոր փորձի համեմատական վերլուծություն տեղական կամ միջազգային այլ կազմակերպությունների օրինակով (բենչմարքինգ):

Քոլեջում գործում է ուսանողների գիտելիքների գնահատման 10 միավորային համակարգը: Քոլեջն ունի մատյաններ, որոնցում պարբերաբար գրանցվում են ուսանողների հաճախումներն ու ընթացիկ գնահատումները: «Ուսանողների գնահատման ընթացակարգեր» փաստաթուղթը ներառում է ուսանողների գնահատման բողոքարկման վերաբերյալ դրույթներ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բողոքարկման դեպքեր չեն գրանցվել: Առաջադրանքների գնահատման համար ռուբրիկներ սահմանված չեն, սակայն առկա են որոշ առաջադրանքներ, որոնցում միավորները հստակ նշված են (Օրինակ՝ Սոցիալական աշխատանք ՄԿԾ): Այնուամենայնիվ փաստենք, որ փորձը տարածում չի գտել, այլ ՄԿԾ-ների վրա: Համաձայն ինքնավերլուծության՝ Քոլեջը կիրառում է գնահատման տարբերգործիքները՝ սեմի-նար պարապմունքներ, գործնական և անհատական առաջադրանքներ, գործնական, ստուգողական աշ-խատանքներ, զեկուցումներ, ռեֆերատներ, իրավիճակային խաղեր, խմբային աշխատանքներ, պրակտիկաներ գրավոր և բանավոր եզրափակիչ քննություններ այլն: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ գործնականում դրանք հաճախ չեն կիրառվում կամ կիրառվում են միայն առանձին ՄԿԾ-ներում: Մասնավորաբար «Սոցիալական աշխատանք» կրթական ծրագրում կիրառվում է առանձին դեպքերի ուսումնասիրություն, իսկ մյուս կրթական ծրագրերում՝ նման մոտեցում չի գործածվում: Դասալսումների և փորձագիտական այցի արդյունքում պարզվեց, որ խմբային աշխատանքներ ևս հիմնականում չեն իրականացվում:

Քոլեջն իր ակադեմիական ազնվությունն ապահովելու սահմանված պահանջներ չունի:

Քոլեջը մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման հստակ սահմանված քաղաքականություն չունի, սակայն կիրառվում են որոշակի մեխանիզմներ, որոնք որոշակիորեն նպաստում են կրթական ծրագրերի բարելավմանը: Այդպիսի մեխանիզմներից են՝ դասալսումները, պրակտիկաների եզրակացությունները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների եզրակացությունները, հարցումները, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրանք համակողմանի վերլուծության չեն ենթարկվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջն արագ փոփոխվող աշխարհում իրականացնում է տարբեր ուղղություններով կրթական ծրագրեր և շարունակում է ավելացնել նոր կրթական ծրագրեր, որոնք համապատասխանում են Քոլեջի առաքելությանը: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ նոր կրթական

ծրագրերի ավելացման և գործող ծրագրերի շարունակականության ապահովման տեսանկյունից կարևոր է տարածաշրջանում աշխատաշուկայի ուսումնասիրությունն ու վերլուծությունը արտաքին շահակիցների ներգրավմամբ, ինչը կօգնի Քոլեջին ներդնել արդյունավետ կրթական ծրագրեր, որոնք կբխեն նաև տարածաշրջանի կարիքներից: Փորձագիտական խումբը կարևորում է նաև մասնագիտությունների կրթական ծրագրերի տեղական կամ միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունն ու համեմատական վերլուծությունը կրթական ծրագրերի շարունակական բարելավման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ Քոլեջը դեռևս չունի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական մոտեցում: Չնայած առանձին դասախոսների փորձերին՝ մեծամասնությունն առաջնահերթություն չեն տալիս ինտերակտիվ և ուսանողակենտրոն մեթոդների կիրառմանը, ինչը կարող է խոչընդոտել վերջնարդյունքների ամբողջական ձեռքբերմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասավանդման և ուսումնառության մեթոդների պարբերական ուսումնասիրությունների իրականացումը, դասախոսների դրական փորձի վերհանումն ու տարածումը կարող են նպաստել ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

Ուսումնառության մեթոդների կիրառման արդյունավետության տեսանկունից փորձագիտական խումբը կարևորում է առաջադրանքների պլանավորումն ու համակարգվածությունը, դրանցում հետազոտական բաղադրիչի ներառումը, ինչը կարող է նպաստել ՄԿԾ-ների վերջնարդյունքների ապահովմանը: Կարևոր է նաև գիտելիքների ամրապնդմանը զուգահեռ գործնական կորողություններ ձևավորող առաջադրանքների ներառումը բոլոր ՄԿԾ-ներում, որը կնպաստի ապահովել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի պահանջների ապահովմանը:

Դրական է Քոլեջի կողմից պրակտիկաների, ամփոփիչ ատեստավորման գնահատման մոտեցումները՝ գործատուների կարծիքների ներառմամբ. դրանց հիման վրա ՄԿԾ-ների բարելավման մշակույթի ներդրումը ՄԿԾ-երը կդարձնի առավել արդիական, մրցակցային, աշխատաշուկայի կարիքներին համապատասխան:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում գնահատման մոտեցումների առկայությունը և առանձին դեպքերում առավել փոխգործուն մեթոդների և ուսանողակենտրոն մոտեցումների գործածումը: Միևնույն ժամանակ խումբը գտնում է, որ գործնականում հստակ սահմանված պահանջների առկայությունն ու մոտեցումների և առավելապես գործնական աշխատանքների և ուսանողակենտրոն մոտեցումների կիրառումը կարող են նպաստել գործնական կարողությունների և հմտությունների ապահովմանը: Այս տեսանկյունից կարևոր կլինի նաև քոլեջում առկա համապատասխան լավ փորձի տարածումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում Քոլեջում մասնագիտության կրթական ծրագրերի մշտա-դիտարկման, արդյունավետության գնահատման որոշակի մեխանիզմների կիրառումը, այնուամենայնիվ խումբը գտնում է, որ դրանց նպատակայնության և պարբերականության ապահովման, բարելավման հստակ սահմանված քաղաքականության որդեգրման պայմաններում չի վտանգվի մրցունակ մասնագետի պատրաստման առաքելության իրականացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գեղարքունիքի տարածաշրջանային քոլեջն իրականացնում է իր առաքելությանը համապատասխան ՄԿԾ-ներ, որոնք, ըստ

վերջնարդյունքների, համապատասխանում են ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակին, հիմնականում առկա են մոդուլներին համապատասխան ուսումնառության նյութերը, կիրառվում են ուսանողների գիտելիքները և կարողությունները զարգացնող ուսուցման ձևեր, առաջադրանքներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Գեղարքունիքի տարածաշրջանային քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գեղարքունիքի տարածաշրջանային քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**.

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ԳՏՊՔ-ում ընդունելությունն իրականացվում է ՀՀ ԿԳՄՄՆ 2012թ. ապրիլի 5-ի N254-Ն որոշմամբ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգով: 2020թ.-ից ընդունելության գործընթացը կատարվում է՝ էլեկտրոնային (առցանց) եղանակով (https://colleges.emis.am): Քոլեջում դիմորդների ընդունելությունն իրականացվում է առկա և հեռակա ուսուցմամբ՝ միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ: Ընդունելությունն իրականացվում է մրցույթային կարգով, առանց ընդունելության քննությունների՝ հիմնական կրթության վկայականի, ատեստատի միավորների գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար, ցանկով ընդունելության մրցութային առարկաների գնահատականների հիման վրա: Ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդները ընդունվում են անվճար ուսուցման համակարգով:

Ինքնավերլուծության համաձայն՝ ուսանողների հավաքագրման նպատակով կարիերայի պատասխանատուն՝ քոլեջի ներկայացուցիչների և քոլեջի կողմից հրավիրված շրջանավարտների հետ միասին, այցելում է դպրոցներ և հանդիպում աշակերտներին, նրանց ծնողներին, մանկավարժներին, ներկայացնելով նրանց մասնագիտական կրթության և քոլեջի դերը: Դպրոցի աշակերտների համար կազմակերպվում են այցեր քոլեջ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դիմորդները քոլեջի մասին մեծամասամբ տեղեկանում են՝ հարազատներից, շրջանավարտներից, քոլեջի աշխատակիցներից և դպրոց այցերից: Դիմորդների հավաքագրման հարցում մեծ դեր է խաղում՝ քոլեջի կողմից իրականցված այցերը՝ տարածաշրջանի տարբեր ուսումնական հաստատություններ: Տեղեկատվության լիարժեք փոխանցելու նպատակով քոլեջը նաև բաժանում է թռուցիկներ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2018-2021 թվականների ընթացքում ուսանողների քանակը՝ աճել է, իսկ 2021 թվականից հետո նվազել է, 2022-2023 ուստարում կրկին գրանցվել է ուսանողների աճ: Ուսանողների քանակի նվազումը քոլեջը պայմանավորեցնում է տարածշրջանի բնակչության նվազմամբ: Փաստաթղթերի ուսումնասիրման ընթացքում պարզ դարձավ, որ 2021-2022 ուստարում ուսանողների քանակը կազմել է՝ 222, 2022-2023 ուստարում ՝ 210, իսկ 2023-2024 ուստարում՝ 239 ուսանող: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ընդունելության մրցութային կարգ չի գործում, բոլոր դիմորդներն ընդունվում են քոլեջ:

Ուսանողների կարիքների վերհանման նպատակով Քոլեջում գործում են որոշ մեխանիզմներ՝ հարցումներ, համակարգողների ինստիտուտ (կուրսղեկ) և Ուսանողական խորհուրդ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց հուզող խնդիրները բարձրաձայնում են մեծամասամբ դասախոսների և համակարգողների շրջանում: Կուրսերի համակարգողները մեծամասամբ կազմակերպչական խնդիրներով են զբաղվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ուսանողների շրջանում իրականացվող անանուն հարցումները ևս նպաստում են ուսանողների կարիքների վերհանմանը: Օրինակ՝ անանուն հարցումների միջոցով ուսանողների մեծամասնության կողմից դժգոհություն է եղել դասախոսներից մեկի ուսուցման ձևի վերաբերյալ, ինչի արդյունքում քոլեջի ղեկավար կազմը ուսումնասիրել է տեղեկատվության օբյեկտիվությունը և դասախոսի դասավանդվող ժամերի քանակը նվազեցվել է:

Կրթական կարիքների վերհանման մեկ այլ օղակ է նաև ԿԽ-ն: Քոլեջի երեք ուսանող ներգրաված է Խորհրդում, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները ԿԽ-ում դեռևս որևէ հարց չեն բարձրացրել: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ուսանողների խնդիրները մեծամասմաբ լուծում են գտնում ներքևի օղակներում և դեռևս հարկ չի եղել այն բարձրաձայնել ԿԽ-ում:

Ուսանողներին խորհրդատվական ծառայություններ մատուցում են Կարիերայի ուղղորդման պատասխանատուն և դասախոսները: Կարիերայի պատասխանատուի կողմից իրականացվող խորհրդատվական ծառայություններն ուղղված են ուսանողների առավել հեշտությամբ մուտք գործելուն աշխատաշուկա, աշխատանքային պայմանների ծանոթացմանը և հարցազրույցներին պատշաճ ներկայացմանը: Համաձայն ինքնավերլուծության՝ ուսանողների 83%-ը ընդգրկված է լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ այս թվային ցուցանիչների ձևավորումը չունի հստակ հիմնավորում: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ՄՈՒՀ-ի դասախոսները մեծ պատրաստականությամբ իրականացնում են հավելյալ պարապմունքներ՝ հաշվի առնելով ուսանողների կարիքները, կապված նաև թեմայի վատ յուրացման կամ բացակայությունների հետ: Դասախոսների կողմից նախքան քննություններն իրականացվում են խորհրդատվական ծառայություններ, որի համար դասախոսի կողմից կազմվում է հստակ ժամանակացույց:

Համաձայն ինքնավերլուծության՝ ուսանողների 90%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, 60%-ն օգտվում է այդ ծառայություններից և 55%-ը բավարարված է այդ ծառայություններից: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ այս թվային ցուցանիշների ձևավորումը ևս չունի հստակ հիմնավորում: Թեև քոլեջը չունի վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակացույց, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները վարչական աշխատակազմին կարող են դիմել

ցանկացած ժամի: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ուսանողների վերհանած խնդիրների որոշակի հատված լուծում է գտել: Օրինակ՝ հիմնական դժգոհությունը եղել է քոլեջ կողմնակի անձանց մուտք ու ելքի, դասաժամերի ընթացքում միջանցքներում շարժի և աղմուկի հետ: Որպես լուծում Քոլեջում տեղադրվել են տեսախցիկներ և դասաժամերի ընթացքում սկսել են կողպել մուտքի դուռը:

Քոլեջում կարիերայի կենտրոնը գործում է 2013 թվականից ի վեր և ունի մեկ աշխատակից: Ըստ ինքնավերլուծության, կարիերայի կենտրոնը խթանում և ցուցաբերում է աջակցություն և խորհրդատվություն ուսանողների կարիերային վերաբերվող տարբեր հարցերում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի պատասխանատուն սեմինարներ է կազմակերպում, օրինակ՝ CV-ների, ինքնակենսագրականների գրելաձևերի, անձի և մասնագիտական SWOT վերլուծությունների, հարցազրույցներին ներկայանալու և էթիկայի կանոնների վերաբերյալ:

Կարիերայի պատասխանատուն նաև վարում է քոլեջի ֆեսբուքյան էջը, որի միջոցով էլ հրապարակում է քոլեջում գործող թափուր հաստիքները, նպատակ ունենալով քոլեջի շրջանավարտներով համալրել հաստիքները: Կան դեպքեր, երբ ուսանողները աշխատանքի են տեղավորվել կարիերայի պատասխանատուի ուղղորդմամբ, օրինակ՝ Մարտունի բժշկական կենտրոնի հետ կապ հաստատելու շնորհիվ քոլեջի «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի շրջանավարտը անցել է աշխատանքի: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների գերակշիռ մասը չի աշխատում իր մասնագիտությամբ: Կարիերայի կենտրոնը աշխատանք է տանում նաև գործատուների հետ, կազմակերպելով փոխադարձ այցեր՝ ուսանող-շրջանավարտ–գործատու–քոլեջ կապը ապահովելու ուղղությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գործատուների մեծ մասը քոլեջի նախկին շրջանավարտներն են: Կարիերայի կենտրոնը ստեղծել է գործատուների և շրջանավարտների բազա, այնուամենայնիվ փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ շրջնավարտների և գործատուների տվյալների բազայի պարբերաբար թարմացումը արդյունավետորեն չի իրականացվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի կենտրոնը հետևողական չէ շրջանավարտների հետագծին: Ինքնավելուծության համաձայն՝ կարիերայի խորհրդատուն ընդգրկված է նաև քոլեջի ընդունող հանձնաժողովում, որտեղ ևս շահակիցներին տրամադրում է մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն: Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ իրականացվում են այլ քոլեջների կարիերայի կենտրոնների պատասխանատուների հետ հանդիպումներ, քննարկում են միջոցառումների իրականացման մեխանիզմները, ինչ մեթոդներով են աշխատում շրջանավարտների հետ և փորձի փոխանակում է իրականացվում/օրինակ՝ քոլեջի կարիերայի կենտրոնը համագործակցում է Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի կարիերայի կենտրոնի հետ/:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը չունի հստակ քաղաքականություն հետազոտության ոլորտում և առկա չեն ուսանողների հետազոտական աշխատանքները խթանելու ընթացակարգեր: Քոլեջում հիմնական հետազոտական աշխատանքներն իրականացվում են ռեֆերատների և կուրսային աշխատանքների տեսքով, օրինակ՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրի շրջանակներում, որպես կուրսային աշխատանքի թեմա է ընտրվել՝ «MS EXCEL նշանակությունը և կառուցվածքը», «Փաստաթղթերի պահպանումը և տպագրումը», իսկ «Նախադրպոցական կրթություն»

կրթական ծրագրի շրջանակներում, որպես կուրսային աշխատանքի թեմա է ընտրվել՝ «Ընտանիքի տիպերը», «Տարրական հարաբերությունների ընկալման առանձնահատկությունները Ն/դ տարիքում»:

Հատկանշական է նշել, որ քոլեջում հետազոտական կարողություն ձևավորող առաջադրանքները իրականացվում են ոչ բոլոր մոդուլների շրջանակներում: Փորձագիտական խմբին ներկայացված ռեֆերատային աշխատանքներում բացակայում է ուսանողի ինքնուրույն միտքը և ռեֆերատները չեն պարունակում վերլուծական բաղադրիչ, եզրահանգում, և հիմնականում նշված չեն հղումները՝ օգտագործված գրականության վերաբերյալ:

Քոլեջում ուսանողների իրավունքները և պարտականությունները ամրագրված են ՀՀ օենսդրությամբ և Ուսանողների ներքին կարգապահական կանոններով և ուսանողների հետ կնքվող պայմանագրում:

Քոլեջի ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող կառույցներից է Ուսանողական խորհուրդը: ՈւԽ-ն հաշվետու է կարիերայի կենտրոնին, կարևոր ժողովներին կարիերայի կենտրոնի պատասխանատուն ներկա է լինում: ՈւԽ-ն առաջնորդվում է իր կանոնադրությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ անդամ կարող են լինել բոլոր ցանկացություն հայտնող ուսանողները: Կառույցը զբաղվում է ուսանողների իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներով, թեև որևէ խնդիր դեռևս ՈւԽ-ում չի բարձրաձայնվել: ՈւԽ ի միջնորդությամբ իրականացվում են միջոցառումներ, արշավներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջոցառումներ հաճախակի չեն կազմակերպվում, քանի որ՝ ուսանողների մեծամասնությունը հարակից գյուղերի բնակիչներ են և տրանսպորտի ժամային խնդրի պատճառով դասերից դուրս այլ միջոցառումների չեն կարողանում մասնակցել:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների որակի ապահովման և գնահատման մեխանիզմների կանոնակարգերը և ընթացակարգերը մշակվել են և ներդրման գործընթացի փուլում են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ քոլեջում հիմնականում չեն գործում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ դիմորդների հավաքագրման նպատակով ԳՏՊՔ-ն այցեր է կազմակերպում դպրոցներ, ներգրավելով նաև շրջանավարտերին: Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն, որ ուսանողների քոլեջ ընդունվելու հիմնական պատճառը նախկին շրջանավարտների դրական կարծիքն է և տարածաշրջանային առումով հարմարավետությունը:

Դրական է այն, որ ուսանողների կարիքների վերհանման նպատակով քոլեջում գործում է համակարգողների ինստիտուտը: Կարևորվում է նաև ուսանող-համակարգող կապը, որը նպաստում է ուսանողների կարիքների ն արագ արձագանքմանը: Դրական է համարվում, որ քոլեջում պարբերաբար անցկացվում են հարցումներ, և դրանց արդյունքում լուծվում են որոշակի խնդիրներ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ կարիերայի պատասխանատուի կողմից իրականացվում են խորհրդատվական լրացուցիչ պարապմունքներ, որոնք միտված են ուսանողների աշխատաշուկա հեշտությամբ մուտք գործելուն: Դրական է նաև այն, որ դասախոսները հստակ ժամանակացույցով իրականացնում են խորհրդատվական

ծառայություններ նախքան քննությունները, ինչպես նաև բացակայությունների կամ այլ պատճառներով դասը վատ ընկալած ուսանողների հետ պատրաստակամությամբ աշխատանք են իրականացնում, որը նպաստում է ուսանողների առաջընթացին:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ կան դեպքեր, երբ կարիերայի կենտրոնի շնորհիվ շրջանավարտներն անցել են աշխատանքի, այդուհանդերձ, գտնում է, որ շրջանավարտների հետ հետադարձ կապի ամրապնդումը և նրանց հետագծի ուսումնասիրությունը կնպաստի շրջանավարտների կարիքների պարբերաբար վերհանմանը: Դրական է նաև այն, որ կարիերայի կենտրոնի կողմից որոշակի տվյալներ հավաքագրվել են շրջանավարտների և գործատուների վերաբերյալ, այնուամենայնիվ, փոձագիտական խումբը գտնում է, որ բազաների հավաքագրման և թարմացման գործընթացները արդյունավետ կազմակերպելու պարագայում, հնարավոր կլինի առավել ամրապնդել գործատուների հետ կապը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում հետազոտական բաղադրիչի ներդրման ուղղությամբ քոլեջի ոչ ինտենսիվ քայլերը, մասնավորապես առաջադրանքներում, ռեֆերատիվ և կուրսային աշխատանքներում ուսանողների ինքնուրույն բաղադրիչի բացակայությունը, ինչը կարող է խոչընդոտել ուսանողների մոտ վերլուծական կարողությունների զարգացմանը:

Խնդրահարույց է, որ ԳՏՊՔ-ի կողմից ՈւԽ-ն թեև դիտարկվում է որպես ուսանողների իրավուքների և շահերի պաշտպանության համար պատասխանատու մարմին, սակայն, այդուհանդերձ, ուսանողները իրենց կարիքների պաշտպանության հարցով չեն դիմում ՈւԽ-ին:

Թեև ԳՏՊՔ-ում ուսանողներին տրամադրվում են կրթական, խորհրդատվական և այլ ծառայություններ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ կարևոր է նաև դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրումը, ինչը կարող է նպաստել մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալուն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՏՊՔ-ում առկա են ուսանողների ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ, ուսանողները ցանկացած ժամանակ կարող են դիմել վարչական անձնակազմին, առկա են որոշ խորհրդատվական ծառայություններ, իրականացվում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար** :

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

ԳՏՊՔ-ը կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ: Համաձայն ինքնավերլուծության և ներկայացված փաստաթղթերի՝ Քոլեջում աշխատում է 42 դասախոս, որոնցից 9-ը՝ համատեղությամբ: Դասախոսական կազմի բոլոր անդամներն ունեն բարձրագույն կրթություն, նրանցից 5-ը՝ մագիստրոսի որակավորում, 1-ը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Քոլեջում դասավանդում են նաև երկու պրակտիկ դասախոսներ:

Քոլեջն ունի դասախոսների և ՈւՕ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: Դասախոսների ընտրությունն իրականացվում է օրենսդրական կարգերին և սահմանված պահանջներին համապատասխան: Դասախոսական անձնակազմին ներկայացվող առանձին պահանջներ սահմանված չեն, դրանք հիմնականում համապատասխանում են ՊԿՉ-ով սահմանված պահանջներին: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ Քոլեջը, պայմանավորված տարածաշրջանում մասնագետների պակասով, երբեմն ունենում է դասախոսների կարիք որոշ նեղ մասնագիտական առարկաների մասով: Դասախոսները ծանրաբեռնված են. օրինակ՝ կան դասախոսներ, ովքեր դասավանդում են մինչև 16 մոդուլ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասախոսներն ունեն տարեկան պլաններ և ներկայացնում են հաշվետվություններ: Քոլեջն ունի «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգերը, մեխանիզմները և գործիքները» փաստաթուղթը, որը հաստատվել է դեռևս 2016թ.-ին: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ այն ներառում է դասավանդման որակի գնահատման ընթացակարգերը, օբյեկտները, սուբյեկտները, գնահատման մեխանիզմներն ու գործիքները: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ փաստաթուղթը դեռևս չի կիրառվել ամբողջ ծավալով, մասնավորապես՝ բացակայում են հարցումների, դասալսումների քանակական և որակական վերլուծությունները: Առկա են ուսանողների կողմից դասավանդողների գնահատման որոշակի հարցումներ, որոնք հիմնականում արտահայտում են ուսանողների գոհունակությունը դասախոսներից: Սակայն հարցումների պարբերականությունն ակներև չէ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսները հիմնականում տեղյակ չեն ուսանողների կողմից դասախոսների գնահատման արդյունքներից: Գնահատման և հարցումների արդյունքների համապարփակ վերլուծություններ քոլեջում չեն իրականացվում:

Համաձայն ինքնավերլուծության՝ Քոլեջի դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունն արտահայտող հիմք է ծառայում նաև «Ներքին կարգապահական կանոններ»-ը, որի խախտման նախադեպեր Քոլեջը չի արձանագրել:

Դասավանդման որակի բարելավման նպատակով ամբիոնի վարիչներրն իրականացվում են դասալսումներ, ինչպես նաև դասախոսների միջև իրականացվում են փոխադարձ դասալսումներ սահմանված ժամանակացույցով: Առկա են նաև դասալսումների արձանագրություններ, որոնք ներառում են դասի դրական կողմերը, թերացումները, ինչպես

նաև դիտողություններն ու առաջարկությունները: Այցի ընթացքում պարզվեց, որ դասալսումների արդյունքում առկա են բարելավումների առանձին նախադեպեր: Օրինակ՝ ամբիոնի վարիչի կողմից դասալսման արդյունքում վերջին տարիներին վեր է հանվել դասախոսների համակարգչային կարողությունների խնդիրը, որի համար կազմակերպել և իրականացվել է կարճաժամկետ դասընթաց: Մեկ այլ օրինակ է, երբ ամբիոնի վարիչի դասալսման արդյունքում պարզ է դարձել, որ դասախոսը լսարանը կառավարելու հարցում թերանում է: Ամբիոնի վարիչի կողմից դասախոսին խորհուրդ է տրվել այլ մեթոդների ընտրություն իրականացնել, որոշ ժամանակ անց կրկին դասալսելով պարզվել է, որ խնդիրը լուծվել է:

Քոլեջում դասախոսների կարիքների վերհանման վերաբերյալ ընթացակարգեր ու մեխանիզմներ ներդրված չեն: Դասախոսների կարիքները ևս վեր են հանվում դասալսումների ընթացքում, սակայն դրանց հիման վրա պարբերական վերապատրաստումներ կամ կարճաժամկետ դասընթացներ չեն իրականացվում: Դասախոսական կազմը մասնակցություն է ունեցել Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) կողմից իրականացվող վերապատրաստումներին, որոնք պարտադիր բնույթ ունեն: Միաժամանակ դրանք մանկավարժամեթոդական ուղղվածության վերապատրաստումներ են: Առանձին վերապատրաստումների է մասնակցել կարիերայի կենտրոնի պատասխանատուն, որի արդյունքները փորձում է ներդնել Քոլեջում: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսների կարիքների վերհանման կանոնակարգված գործընթացներ չեն իրականացվում, դասախոսներն ունեն վերապատրաստման կարիք ոչ միայն մասնագիտական, այլև մանկավարժամեթոդական ուղղվածությամբ: Այցի ընթացքում պարզվեց նաև, որ թեև վերապատրաստումների համար բյուջեով նախատեսված է ֆինանսական ռեսուրս, սակայն այն հիմնականում չի ծախսվում ամբողջ ծավալով վերապատրաստման ուղղությամբ, ինչպես նաև ամբիոնների միջև դրական փորձի վերհանման, փոխանակման և տարածման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվում:

Քոլեջին ունի նաև համատեղության կարգով աշխատող դասախոսներ, քոլեջում հրավիրյալ դասախոսներ չկան: Առկա չեն նաև դասախոսների կայունությունն ապահովող հստակ մեխանիզմներ, սակայն ունեն դասախոսների որոշակի ռեզերվ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն իրականացնում է նաև դասախոսների երիտասարդացման քաղաքականություն: Դասախոսների հոսունությունը ևս շատ չէ, սակայն այցից պարզ դարձավ, որ դասախոսների և մասնագետների կարիքն ակներև է, մասնավորապես մի դասախոսի կողմից տարբեր ուղղություններով մոդուլների դասավանդման հիմքով: Օրինակ՝ դասախոսներից մեկի կողմից դասավանդվում են «Նախադպրոցական մանկավարժություն», «Համագործակցություն ընտանիքի և համայնքի հետ», «Կերպարվեստային գործունեության կազմակերպում», «Ձեռարվեստի դասավանդման մեթոդիկա, «Նախադպրոցականի երաժշտական դաստիարակություն», «Պար և ռիթմիկա», «Նախադպրոցականի թատերական գործունեության կազմակերպում» մոդուլները, որոնք ներառում են տարբեր ուղղություններ:

Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման համար Քոլեջում 2016թ. ներդրվել է «Սկսնակ դասախոսների մենթորության քաղաքականություն և ընթացակարգ», «Սկսնակ դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթղթերը, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ դրանք Քոլեջի պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտություն:

Այնուամենայնիվ, մենթորության պրակտիկան Քոլեջում իրականացվել է երիտասարդ դասախոսների առաջընթացին նպաստելու նպատակով: Առկա են օրինակներ, երբ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրում սկսնակ դասախոսներին աջակցել է մենթորը (ամբիոնի վարիչը) մասնավորապես մեթոդների կիրառման և ուսումնառության նյութերի մշակման աշխատանքներում:

Քոլեջը չունի դասախոսների խրախուսման համար հստակ սահմանված պահանջներ, սակայն առկա են խրախուսումներ, որոնք ունեն ընդհանրական բնույթ, օրինակ՝ աշխատանքի ծավալի մեծացման համար և այլն:

Քոլեջն ունի վարչական և ՈւՕ աշխատակազմ, առկա են պաշտոնի նկարագրեր, որոնցում ներկայացված են հիմնական գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց նաև, որ ՈւՕ կազմի ընտրության սահմանված քաղաքականությունն ու ընթացակարգերն ունեն ֆորմալ բնույթ, ՈւՕ կազմի ընտրությունն իրականավցվում է հարցազրույցով: Քոլեջը թափուր հաստիքները լրացնելու համար կիրառում է դրանք ներքին ռեսուրսներով համալրելու քաղաքականությունը: Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ վարչական և ՈւՕ կազմն ունի բազմազբաղություն, ներառյալ նաև մի շարք մոդուլների դասավանդում:

Վարչական և ՈւՕ կազմի խրախուսման դեպքեր ևս եղել են՝ պայմանավորված աշխատանքի ծանրաբեռնվածությամբ կամ հանձնաժողովների կազմում ներգրավվածությամբ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջը դասախոսական կազմի ընտրությունն իրականացնում է մրցույթային կարգով սահմանված օրենսդրական պահանջներին համապատասխան: Կարևոր է նաև դասախոսական կազմի կոմպետենտությունը, որը հաշվի է առնում Քոլեջը, սակայն նեղ մասնագիտական առարկաներ դասավանդողների ընդլայնումը կնվազեցնի դասախոսական կազմի ծանրաբերնվածությունը, ինչը կարող է դրական ազդել դասավանդման որակի վրա:

Հատկանշական է, որ Քոլեջն ունի դասավանդման որակի գնահատման ընթացակարգերը, գործիքակազմերը ներառող փաստաթղթեր, այնուամենայնիվ փորձագիտական խումբը կարևորում է դրանց իրատեսականությունը և գործնականում նպատակային կիրառումը: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև վերլուծությունների միջոցով դասախոսների կարիքների պարբերական վերհանումը, դասավանդման և ուսումնառության գործընթացի բարելավմանը միտված մշակույթի ձևավորումը և տարածումը դասալսումների արդյունքում: Այս տեսանկյունից գնահատման արդյունավետ ընթացակարգերի, մեխանիզմների և գործիքակազմի ներդրումը հիմք կհանդիսանա թե կարիքների վերհանման, թե գործընթացների բարելավման համար:

Փորձագիտական խումբը գնահատում է Քոլեջի մոտեցումները դասախոսների երիտասարդացման քաղաքականության իրականացման վերաբերյալ, ինչպես նաև նրանց արտահոսքի սակավությունը, սակայն միաժամանակ ընդգծում է դասախոսական կազմի կայունության և տարբեր մեխանիզմներով նրանց համալրման ապահովումը, մասնավորապես նեղ մասնագիտական առարկաների մասով, ինչը կնպաստի դասավանդման որակի բարձրացմանը: Գնահատելի է նաև Քոլեջում պրակտիկ դասախոսների

առկայությունը, իսկ պրակտիկ դասախոսների թվի մեծացումը կնպաստի կրթական ծրագրերի արդիականացմանը և գործատուների պահանջների դիտարկմանը:

Սկսնակ դասախոսների առաջընթացի ապահովման համար մենթորության պրակտիկան Քոլեջում շարունակական բնույթ ունի, ինչը գնահատելի է փորձագիտական խմբի կողմից:

Փորձագիտական խումբը գործընթացի արդյունավետության բարձրացման համար կարևորում է նաև խրախուսման մեխանիզների ներդրումը Քոլեջում հստակ գնահատման չափանիշների հիման վրա, ինչը կխթանի նաև դասախոսական կազմին մասնագիտական առաջընթացն ու որակավորումների ընդլայնումը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում ոչ միայն դասախոսական կազմի, այլ նաև ՈւՕ կազմի ծանրաբեռնվածությունը տարբեր ուղղություններով, ինչի արդյունքում կարող է վտանգվել մոդուլների վերջնարդյունքների ամբողջական ապահովումը և համապատասխան պաշտոնների իրավասության ներքո իրականացվող գործընթացները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջը կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի դասախոսական կազմի ընտրության քաղաքականություն, որոշ չափով կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, դասավանդողների երիտասարդացման քաղաքականություն և նրանց աջակցության որոշ մեխանիզմներ, պրակտիկ դասավանդողներ, մասնագիտական ներուժ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**.

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Քոլեջն իր ռազմավարական զարգացման ծրագրում չի անդրադարձել ուսանողների վերլուծական, ստեղծագործական մտածողության զարգացմանը, նրանց հետազոտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Համաձայն ինքնավերլուծության՝ հետազոտության զարգացումը Քոլեջը որոշակիորեն կապում է առաքելության հետ՝ գիտելիքի ստեղծման, փոխանցման, տարածման, որակյալ մասնագետների պատրաստման մասով, որն անհնար է իրականացնել առանց ուսումնառության և հետազոտության կապի ապահովման: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, սակայն, որ քոլեջը դասավանդման և ուսումնառության գործընթացներում ևս չի շեշտադրել հետազոտության զարգացումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ դասախոսական կազմն ունի ներուժ ապահովելու հետազոտության զարգացումը Քոլեջում, սակայն այս ուղղությամբ Քոլեջը դեռևս չի հստակեցրել իր նշաձողը, հիմնական անելիքներն ու հետազոտության ուղղության իր ընկալումները: Այցից պարզ դարձավ, որ որոշ արտաքին շահակիցներ ունեն Քոլեջի զարգացմանը միտված առաջարկներ, որոնք իրենց հիմքում

պարունակում են հետազոտական բաղադրիչ, սակայն արտաքին շահակիցները ակտիվորեն ներգրավված չեն Քոլեջի զարգացմանը միտված գործընթացներում:

ԳՏՊՔ-ը չունի հետազոտական աշխատանքների իրականացման քաղաքականություն և ընթացակարգեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որպես հետազոտական աշխատանք՝ Քոլեջը դիտարկում է ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաները: Ըստ ինքնավերլուծության՝ դրանց հիմնական նպատակն է ուսանողի կողմից յուրացված տեսական գիտելիքի ամրապնդումը, կարողությունների ձեռքբերումը, գործունեության հիման վրա ուսանողի մասնագիտական և պրակտիկ հմտությունների ձևավորումը: Նախաավարտական պրակտիկային զուգահեռ ուսանողները ներկայացնում են նաև նախաավարտական պրակտիկայի հաշվետվություն, սակայն դրանք ունեն տեղեկատվական բնույթ, չեն ներառում ինքնուրույն հետազոտական բաղադրիչ և տարբեր կրթական ծրագրերի մասով չի ապահովվում միասնական մոտեցում: Օրինակ՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Սոցիալական աշխատանք» կրթական ծրագրերի շրջանակում ներկայացված հաշվետվությունները ներառում են տեղեկատվություն համապատասխանաբար՝ համակարգչային ցանցերի կառուցվածքի և սոցիալական աշխատանքի առանձնահատկությունների մասին, իսկ նույն և «Նախադպրոցական կրթություն» կրթական ծրագրի շրջանակում ներկայացված այլ հաշվետվություններ պարունակում են տեղեկատվություն պրակտիկայի ընթացքի վերաբերյալ:

Որպես հետազոտական աշխատանք Քոլեջը դիտարկում է նաև կուրսային աշխատանքները և ռեֆերատները, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կուրսային աշխատանքներ գրում են միայն «Նախադպրոցական կրթություն» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրերի շրջանակում և ոչ բոլոր մոդուլներից: Ռեֆերատները հիմնականում հանձնարարվել են «Նախադպրոցական կրթություն» կրթական ծրագրի շրջանակում և մեծամասամբ ռուսաց լեզու առարկայից: Միաժամանակ՝ թե նախաավարտական աշխատանքներում, թե կուրսային աշխատանքներում և ռեֆերատներում բացակայում է հետազոտական բաղադրիչը: Դրանք հիմնականում ունեն վերարտադրողական բնույթ, մեծամասամբ բացակայում են նաև հղումները օգտագործված գրականությունից, գրականության ցանկը և հետազոտական գործունեությունը բնորոշող այլ տարրեր, որոշ դեպքերում՝ պահպանված չեն նաև ակադեմիական ազնվությունն ապահովող պահանջները: Օրինակ՝ «Նախադպրոցական կրթություն» կրթական ծրագրի շրջանակում կատարված կուրսային աշխատանքում համացանցից ուղղակիորեն մեջբերված են մաթեմատիկական պատկերացումների զարգացմանը միտված խաղերը (Արևը հաշվել է սովորում, Ծաղկի թերթիկներ և այլն)՝ առանց համապատասխան հղման:

Հետազոտական բաղադրիչը մասամբ առկա է «Սոցիալական աշխատանք» կրթական ծրագրի իրականացման գործընթացում, սակայն այցի ընթացքում պարզ դարձավ, որ այն ավելի շատ բխում է մասնագիտության առանձնահատկություններից: Օրինակ, ուսանողներին տրվել է առաջադրանք իրականացնելու հարցումներ, սակայն հարցարանը տրամադրվել է դասախոսի կողմից և, ըստ առաջադրանքի, ուսանողները հարցում անցկացրել են իրենց ծանոթ 3-ական մարդու հետ, այնուհետև դիտարկել են անցկացված հարցումների ընդհանուր

արդյունքները: Քոլեջը որպես պետական ամփոփիչ ատեստավորման ձև ընտրել է պետական քննությունը: Դիպլոմային աշխատանքներ չեն իրականացվում:

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասախոսները ներգրավված չեն հետազոտական գործընթացներում և քոլեջում ներդրված չեն հետազոտական, գիտահետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմեր[7]: Չկան դասախոսների կողմից տպագրված մեթոդական ձեռնարկներ կամ ուսումնասիրություններ, բացառությամբ մեկ դասավանդողի, ով համատեղությամբ աշխատում է նաև բուհում[8]: Առկա են դասախոսների ուսումնասիրության առանձին դեպքեր, որոնք սակայն տարածում չեն գտել ամբիոնում կամ Քոլեջում ուսումնառության գործընթացում: Օրինակ՝ փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ որոշ դասախոսներ իրականացրել են ուսումնասիրություններ դասավանդման, ուսումնառության մեթոդների վերաբերյալ, որոնցից մասնավորապես դասապրոցեսում կիրառվել է «Ելքի տոմսեր» մեթոդը, սակայն դասախոսի կողմից կիրառված փորձի փոխանակում քոլեջում չի իրականացվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հետազոտական գործունեությունը խթանող մեխանիզմները բացակայում են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ չնայած Քոլեջում գիտելիքների փոխանցման և հմտությունների ձևավորման գործընթացը կարող է որոշակիորեն նպաստել ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, սակայն հետազոտությունների իրականացման հստակ քաղաքականություն սահմանելու և հետազոտությունը որպես ռազմավարական նպատակ դիտարկելու պարագայում Քոլեջը կկարողանա հստակեցնել իր զարգացման ուղղությունը հետազոտությունների իրականացման մասով, սահմանել խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները, ինչը Քոլեջին կօգնի ամբողջական ծավալով իրականացնել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի պահանջները: Փորձագիտական խումբը կարևորում է նաև հետազոտական բաղադրիչի զարգացման համար արդյունավետության գնահատան ցուցիչների սահմանումը, ինչը հնարավորություն կտա Քոլեջին պարբերաբար գնահատել հետազոտական ոլորտում ձեռքբերվող արդյունքները՝ բարելավում ապահովելու նպատակով: Հետազոտական աշխատանքների արդյունավետ իրականացման համար փորձագիտական խումբը կարևորում է Քոլեջի կողմից իր ներուժի, ինչպես նաև արտաքին շահակիցների ներգրավման հնարավորությունների գնահատման իրականացումը:

Դրական է, որ Քոլեջը տալիս է հանձնարարականներ՝ առաջադրանքների, կուրսային աշխատանքների, ռեֆերատների և նախաավարտական աշխատանքների տեսքով, սակայն դրանցում հետազոտական բաղադրիչի բացակայությունը չի ապահովում ուսանողների հետազոտական կարողությունների զարգացումը: Աշխատանքներում ինքնուրույն բաղադրիչի կարևորումը և ուսանողներին հետազոտական և վերլուծական առաջադրանքների տրամադրումը կնպաստի նրանց քննադատական մտածողության ձևավորմանը, ինչը կնպաստի ուսանողների որոշումներ կայացնելու, խնդիրներին տրամաբանական և ռացիոնալ լուծումներ գտնելուն: Այդ տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է հետազոտական ուղղությունը խթանող հանձնարարականների իրականացումը բոլոր կրթական ծրագրերում:

[7] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:
[8] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

Քոլեջում հետազոտական ուղղության զարգացման համար փորձագիտական խումբը շեշտադրում է խրախուսման մեխանիզմների ներդրումը, այդ թվում՝ ֆինանսական միջոցների հատկացումները, ինչը կխթանի դասախոսների, ինչպես նաև ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացումը, միաժամանակ նաև դրական փորձի վերհանման և տարածման մշակույթի տարածումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջը չունի հետազոտական ուղղության զարգացման համար սահմանված քաղաքականություն, հետազոտության զարգացումը չի դիտարկում որպես Քոլեջի զարգացման ուղղություն, չի գնահատել իր հետազոտական աշխատանքներ կատարելու մասնագիտական ներուժը և դասախոսները ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում, ուսանողների առաջադրանքներում թույլ է հետազոտական/վերլուծական բաղադրիչը, այս ուղղության զարգացման համար չի ներդրել խրախուսման մեխանիզմներ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր:

ԳՏՊՔ-ն ունի երկու մասնաշենք, որոնք հանձնված են քոլեջին անհատույց օգտագործման իրավունքով: Առաջին մասնաշենքը երկհարկանի է և զբաղեցնում է 1388 քմ տարածք, որում իրականացվում են միջին մասնագիտական կրթության ուսումնական դասընթացները, և տեղակայված են վարչական անձնակազմի աշխատասենյակները: Երկրորդ մասնաշենքում իրականացվում են նախնական(արեստագործական) կրթության ուսումնական դասընթացները, և զբաղեցնում է 1598.6 քմ. տարածք: Քոլեջն ունի առանձին արհեստանոց՝ 264.9 քմ և առանձին մարզադահլիճ՝ 259.4 քմ: Քոլեջը ԵՄ ֆինանսական միջոցներով կապիտալ վերանորոգվել է 2012 թվականին և ողջ գույքը հիմնականում նորացվել է 2012թ.-ից:

Կրթական ծրագրերի իրականացման համար ԳՏՊՔ-ն ունի բավարար քանակի լսարանային ֆոնդ, համակարգչային 3 լսարան, անատոմիայի կաբինետ՝ որում առկա է նաև քիմիայի և ֆիզիկայի լաբարատոր նյութեր, հանդիսությունների դահլիճ, արխիվ, սպորտային սարքավորումներով համալրված լսարան և գրադարան: Քոլեջն ապահովված է ինտերնետ կապով:

Համակարգչային 3 լսարաններում տեղադրված են 34 համակարգիչ, 2 պրոյեկտոր, 1 սմարթ գրատախտակ: Քոլեջն ունի ընդհանուր 69 համակարգիչ՝ 2009թ.-ին ձեռք բերված, որոնց մի մասը պահեստավորված է այժմ շահագործվող համակարգիչներից որևէ մեկի անսարքության պարագայում օգտագործելու նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համակարգչային լսարաններից մեկը կահավորվել է 2022թ-ին՝ ԵՄ ֆինանսասավորմամբ, ձեռք են բերվել թվով 14 նոր համակարգիչներ և 5 տպիչ: Նախատեսվում է ևս մեկ լսարան վերանորոգել և կահավորել:

Նոր համակարգիչներով կահավորված լսարանը դեռ չի գործարկվել։

Ներկա պահին Քոլեջն ապահովված է ՄԿԾ-երի իրականացման համար բավարար նյութատեխնիկական բազայով, սակայն ֆինանսական միջոցները դեռևս թույլ չեն տալիս կատարել շարունակական բարելավումներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռեսուրսների մի մասը արդյունավետորեն չեն շահագործվում։ Օրինակ՝ կա պրոյեկտոր, սակայն լսարաններում տեղադրված չէ օգտագործման համար և անհրաժեշտության դեպքում դասախոսն է այն տեղադրում լսարանում, ինչը ուսանողների և դասախոսների համար ավելի խանգարող գործընթացի է վերածվում։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի ուսանողները կարիք ունեն ուսումնասիրելու նաև ՀԾ-ի դիդակտիկ անվճար ծրագիրը, սակայն համակարգիչների հին լինելու պատճառով ծրագիրը հնարավոր չէ տեղադրել և կիրառել։ Համակարգիչների հնարավորությունները մասամբ չեն բավարարում նաև «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրի ուսուցման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների կիրառման համար։

Գրադարանը համալրված է 11640 կտոր գրականությամբ, որից 3458-ը՝ մասնագիտական, 1582-ը՝ դասագրքեր, 2400-ը՝ գեղարվեստական, 800-ը՝ ուսումնամեթոդական և 3400-ը՝ ուսումնաօժանդակ գրքեր են։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Նախադպրոցական կրթություն» մասնագիտությունների գծով գրեթե չկան մասնագիտական գրքեր։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջում չկա ընթերցասրահ։ ԳՏՊՔ-ում առկա չէ էլեկտրոնային գրադարան, անհրաժեշտ նյութերը ուսանողներին տրամադրում են դասախոսները։ Ըստ անհրաժեշտության քոլեջը համագործակցում է նաև Մարտունու կենտրոնական գրադարանի հետ։

Քոլեջում ֆինանսական միջոցների համամասնությունը ձևավորվում է պետական ֆինանսավորումով, որի հիմնական մասը հատկացվում է աշխատավարձին։ Արտաբյուջետային մուտքերը չնչին թիվ են կազմում։ Վճարովի հիմունքներով սովորողների քանակը վերջին տարիներին կտրուկ նվազել է, ինչի հետևանքով պակասել են արտաբյուջետային մուտքերը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նախատեսում է լրացուցիչ կարճաժամկետ ծրագրերի միջոցով մեծացնել արտաբյուջեն, թեև այս ուղղությամբ հստակ քայլեր չեն ձեռնարկվել։

Քոլեջի ֆինանսական ռեսուրսների կառավարումն իրականացվում է տարեկան կտրվածքով բյուջեի նախահաշվի կազմման միջոցով, այնուհետև տարեվերջին ըստ գործող նախահաշվի կազմվում է տարեկան կատարողականը։ Քոլեջի ՌԾ-ում առկա չէ ֆինանսական բաշխում և ֆինանսական նախագծեր՝ բացառությամբ աշխատավարձի, մյուս հատկացված ֆինասները ՌԾ նպատակների հետ չեն կապվում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՌԾ-ով սահմանված կարևոր նպատակադրումներ դուրս են մնացել ֆինանսավորման ուղղություններից։ Օրինակ՝ նյութատեխնիկական բազայի հագեցվածություն, դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ և այլն։

Քոլեջի ծախսերի հիմնական մասը կազմում է աշխատավարձը՝ 86.78 %, ինչպես նաև կրթաթոշակ՝ 8.36 %, կոմունալ՝ 2.62 %, գույքի, անհրաժեշտ սարքավորումների և նյութերի ձեռքբերում՝ 1.5 %, վերապատրաստումներ՝ 0.16 %, այլ ծառայությունների մատուցում՝ 1.9 % ։

Տնտեսումների հաշվին վերանորոգման աշխատանքներ են իրականացրել քոլեջի երկրորդ մասնաշենքում, որը շահագործվում է նախնական (արհեստագործական) կրթության իրականացման համար:

ՄՈՒՀ-ում գործում է «Mulberry» համակարգը, որով ապահովվում է արտաքին փաստաթղթաշրջանառությունը: Ներքին փաստաթղթաշրջանառության համար օգտագործվում է էլեկտրոնային փոստը: Քոլեջում ներքին փաստաթղթաշրջանառությունն ապահովվում է գործավարի կողմից: Քոլեջը քայլեր է ձեռնարկում ստեղծելու ներքին լոկալ ցանց: Քոլեջում առկա է արխիվ և փաստաթղթերն արխիվացվում են, այնուամենայնիվ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արխիվի աշխատանքները համակարգված չեն, տարածքը բավարար չէ եղած փաստաթղթերի պահպանման համար և առկա է փաստաթղթերի պատշաճ համարակալման խնդիր:

Կայքէջում տեղադրված և հասանելի են քոլեջի գործունեությանը վերաբերող փաստաթղթերը, մասնավորապես՝ ֆինանսական հաշվետվություններ, կանոնակարգեր, տարբեր պաշտոնների նկարագրեր և այլն:

Քոլեջի տարածքում տեղադրված են թվով 10 տեսախցիկներ՝ ինչպես շենքի ներսում, այնպես էլ բակային հատվածում, անվտանգության և ներքին կարգապահական կանոնների պահպանման համար: Քոլեջում տեղադրված են հակահրդեհային սարքեր, առկա են արտակարգ իրավիճակների համար նախատեսված տարհանման պլաններ: Մասնաշենքն ունի թվով 2 մուտք՝ ուսանողների տարհանումն իրականացնելու համար: Քոլեջում առկա է բուժկետ՝ անհրաժեշտ պարագաներով և դեղորայքով:

Քոլեջի ստորաբաժանումների ուսումնասիրությունից պարզվեց, որ քոլեջը չունի նաև սննդի կետ, մինչդեռ դասախոսներն ու ուսանողները տեսնում են դրա անհրաժեշտությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ նախատեսվում է կառուցել թեքահարթակներ:

ԳՏՊՔ-ում իրականացվում են որոշ հարցումներ, այնուամենայնիվ փաստենք, որ դրանց վերաբերյալ վերլուծություններն առկա չեն: Հարցումների միջոցով հնարավոր է եղել պարզել ռեսուրսներին վերաբերող որոշ խնդիրներ: Օրինակ՝ հարցումներից պարզ է դարձել, որ ուսանողները դժգոհ են առաջին հարկի լուսավորությունից, և խնդիրը լուծվել է: Առկա են նաև բացահայտված խնդիրներ, որոնք լուծում չեն ստացել, մասնավորաբար՝ ժամանակակից տեխնիկայով վերազինում, լսարանների կոսմետիկ նորոգում, սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման անհրաժեշտություն, սպորտդահլիճի ոչ բավարար ջեռուցում և այլն: Քոլեջը հնարավորինս աշխատանքներ է իրականացնում, սակայն ֆինանսական միջոցները բավարար չեն առկա բոլոր խնդիրները լուծելու համար:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջի շենքային պայմանները՝ լսարանային ֆոնդը ներկայում բավարար են կրթական ծրագրերի իրականացման համար: Գովելի է քոլեջի կողմից ռեսուրսային բազայի արդիականացման ուղղությամբ տարվող քայլերը (ԵՄ համագործակցություն), սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ ռեսուրսային բազայի բարելավմանն ուղղված քայլերի հաճախականությունը կնպաստի կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացմանը: Մտահոգիչ է, որ առանձին մասնագիտությունների գծով համակարգիչներն ունեն նորացման կարիք, ինչպես նաև պրոյեկտորների ֆիքսվածությունն ու օգտաագործումը կարող է նպաստել դասն ավելի ինտերակտիվ անցկացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը ձգտում է մեծացնել իր արտաբյուջեն՝ կարճաժամկետ ծրագրեր նախատեսելով, սակայն մտահոգիչ է այն, որ այս ուղղությամբ ակտիվ քայլեր չեն ձեռնարկվում: Մտահոգիչ է նաև այն, որ Քոլեջի ՌԾ-ում առկա չէ ֆինանսական բաշխում և ֆինանսական նախագծում, բացառությամբ՝ աշխատավարձի: Փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինասաները ՌԾ նպատակների հետ կապելը և ՌԾ-ով նախատեսված հստակ ֆինանսական բաշխում ունենալը կարող է նպաստել քոլեջի ֆինանսական պլանավորման և ՌԾ իրականացմանը: Միաժամանակ, խնդրահարույց է առկա բյուջեի սղությունը, այնպես որ պարտադիր համարվող աշխատավարձի վճարման խնդիրը լուծելուց հետո, այլ նույնիսկ անհրաժեշտ խնդիրներ լուծելու համար բավարար միջոցներ չեն մնում: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի արտաքին շահակիցների հետ համատեղ ռեսուրսների կիրառման և նրանց հետ համագործակցությամբ ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացիան, ինչը կարող է ստեղծել բավարար պայմաններ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Փորձագիտական խումբը դրական է դիտում քոլեջում փաստաթղթային հենքի արխիվացման գործընթացի առկայությունը, սակայն փորձագիտական խմբի համար մտահոգիչ է աշխատանքների ոչ համակարգվածությունը, ինչը կարող է հանգեցնել տեղեկատվության կորստի:

Գովելի է, որ շենքում առկա է գրադարան, սակայն որոշ մասնագիտությունների ուղղությամբ գրադարանային ֆոնդն ունի համալրման կարիք: Նաև էլ. գրադարանի առկայությունը կնպաստի դասախոսների և ուսանողներին ուսումնառության նյութի հեշտ հասանելիությանն ու յուրացմանը:

Դրական է նաև, որ քոլեջուրմ առկա է «Mulberry» համակարգը, նախատեսում են ներդնել ներքին փաստաթղթաշրջանառության լոկալ ցանց: Փորձագիտական խումբը կարևորում է փաստաթղթավորման ավտոմատացման համակարգի ներդրումը, ինչի արդյունքում կբարելավվի կրթական գործընթացների արդյունավետությունը:

Անվտանգության տեսանկյունից փորձագիտական խումբը դրական է գնահատում առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների առկայությունը: Թեև քոլեջում իրականացվել են ռեսուրսների բավարարվածության գնահատման որոշ հարցումներ, սակայն մտահոգիչ է, որ այդ հարցումները լիարժեք չեն վերլուծվում և պարբերական բնույթ չեն կրում, ինչը խոչընդոտում է ներքին և արտաքին շահակիցների իրական կարիքների վերհանմանը:

Դրական գնահատելով քոլեջի ռեսուրսային բազայի հասանելիությունը ուսանողների և դասախոսների համար, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը մտահոգված է, որ ռեսուրսային բազայի հասանելիության և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների բացակայությունը քոլեջին տեսանելի չի դարձնում բարելավման ենթակա ռեսուրսները, իսկ տեսանելի բացերն էլ ֆինանսական միջոցների սղության պատճառով լուծում չի ստանում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՏՊՔ-ը՝ ՄԿԾ-ների իրագործման համար ներկայում ապահովում է բավարար պայմաններ, ջանքեր է գործադրում ռեսուրսների բարելավման և դրանց նորացման ուղղությամբ, ընդհանուր առմամբ ֆինանսական ռեսուրսները բաշխվում են սահմանված քաղաքականությամբ, ձևավորված է անվտանգ միջավայր ուսումնական գործընթացի կազմակերպման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՏՊՔ-ը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները: Միաժամանակ,

փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջն այս ուղղությամբ առկա խնդիրների նկատմամբ առավել ուշադրություն դարձնելու անհրաժեշտություն ունի:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

ԳՏՊՔ-ում գործում է հաշվետվողականության նեքևից վերև համակարգը: Քոլեջի հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Կրթության մասին», «Միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով և Քոլեջի կանոնադրությամբ:

Արտաքին հաշվետվողականությունն ընդհանուր առմամբ ուղղված է ԿԳՄՄՆ, ՊԵԿ, Վիճակագրական վարչություն, Կրթության պետական տեսչություն: Արտաքին շահակիցների առջև հաշվետվողկանությունն ապահովվում է վեբ-կայքի (gtp-college.am) միջոցով, որտեղ պարբերաբար ներկայացվում է քոլեջի գործունեությունը, տեղադրվում են հայտարարություններ, ուսանողներին և դիմորդներին վերաբերող տեղեկատվություն և այլն: Կայքէջում գործում է նաև փաստաթղթեր բաժինը, որտեղ ներկայացված են ՄՈՒՀ-ի վերաբերյալ հիմնական ընթացակարգերը և կանոնակարգերը:

Հաշվետվություններ են ներկայացնում ստորաբաժանումները, որոնք կապակցվում են հաշվետվությունները տարեկան պլանների հետ, սակայն ՌԾ-հաշվետվություն կապն ապահովված չէ: Ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա ԿԽ-ին հաշվետվություն է ներկայացնում քոլեջի տնօրենը: Խորհրդի կազմում ընդգրկված են նաև արտաքին շահակիցներ, ինչը թույլ է տալիս ներքին հաշվետվողականությունը մասամբ փոխակերպել արտաքին հաշվետվողականության: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հաշվետվությունները վերլուծական բնույթ չունեն, դրանք բացարձակապես նկարագրական են:

ԳՏՊՔ-ն ունի նաև ֆեյսբուքյան էջ, որտեղ ևս ներկայացնում են քոլեջում իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը: Առցանց հարթակը կապի ձևավորման մեխանիզմ է, որի միջոցով պարբերաբար պատասխանում են արտաքին շահակիցների ֆեյսբուքյան էջին և էլ. փոստին հղված հարցերին: Կարիերայի պատասխանատուն վարում է ֆեյսբուքյան էջը, իսկ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրի դասախոսներից մեկը վարում է կայքէջը:

Պետք է նաև փաստել, որ էլ. տարբերակով արտաքին շահակիցների հետադարձ կապի արագ արձագանքման մեխանիզմներ քոլեջում առկա չեն:

Քոլեջի կայքէջում և ֆեսբուքյան էջում տեղեկատվությունն ամբողջական չէ և ոչ հաճախ է թարմացվում: Գործընթացների թափանցիկությունն ավելի շատ ապահովվում է անձնական շփումների մակարդակով: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջի կայքէջի և ֆեյսբուքյան էջի հաճախելիության և ակտիվության վերաբերյալ ուսումնասիրություններ ու վերլուծություններ դեռևս չեն իրականացվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները, կարիերայի պատասխանատուն, հաճախ նաև շրջանավարտները իրականացնում են այց դպրոցներ, որտեղ դիմորդների, մանկավարժների և ծնողների հետ քննարկում են Քոլեջի գործունեությունը: Քոլեջում առկա է նաև ՄՈՒՀ-ի վերաբերյալ տեղեկատվական գրքույկ:

Քոլեջում գործում է Կարիերայի կենտրոն, որը կապ է պահպանում շրջանավարտների, գործատուների և հասարակության այլ ներկայացուցիչների հետ:

Կուրսերի համակարգողները, ուսումնական և դաստիարակչական մասերը հետադարձ կապ են ապահովում ծնողների հետ, պրակտիկայի վարիչը՝ գործատուների հետ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում գործում է արհեստակցական կազմակերպություն, որը իր անդամների համար կազմակեպում է մշակութային միջոցառումներ, տոնական հանդիսություններ, ինչպես նաև սոցիալապես անապահով աշխատակիցներին ցուցաբերում է դրամական օգնություն:

Կան հասարակության հետ կապի մեխանիզմներ՝ կայք, ֆեյսբուքյան էջ, էլեկտրոնային փոստ, սակայն դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմներ քոլեջում առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նախատեսում է անցկացնել հարցումներ արտաքին շահակիցների շրջանում:

Հասարակությանը նեղ մասնագիտական գիտելիքի փոխանցման համար նախատեսում են վերականգնել 2017 թվականին կատարած կարճաժամկետ ծրագրերից, որոնցից են օրինակ՝ «Եռակցում», «Գազաֆիկացում», «Տրակտորիստ» և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված կարճաժամկետ ծրագրերի իրականացման համար չունեն բավարար մարդկային և տեխնիկական ռեսուրս:

Քոլեջի ուսանողները մասնակցել են ներքոլեջային կրթադաստիարակչական միջոցառումների և մրցույթների, որոնք կազմակերպել է Կարերայի կենտրոնը: Այդպիսիք են օրինակ՝ «Սուրբ Զատիկ», «Հոգեբանություն», «Ռուսաց լեզվի շաբաթ»,«Բազկամարտի մրցույթ» և այլն:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ԳՏՊՔ-ն ունի որոշակիորեն ձևավորված արտաքին հաշվետվողականության համակարգ: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի բացակայությունը կարող է խանգարել ՄՈՒՀ–ին՝ հասկանալու կատարված աշխատանքի բացերը և իրականացնելու ընթացիկ բարելավումներ:

Փորձագիտական խումբը դրական է դիտարկում կազմակերպված միջոցառումները, ինչը նպաստում է հասարակության իրազեկվածությանը քոլեջում իրականացվող գործընթացների վերաբերյալ:

Գովելի է, որ ԳՏՊՔ-ն ունի պաշտոնական կայքէջ և ֆեյսբուքյան էջ, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը նշում է, որ կայքեջի և ֆեյսբուքյան էջի արդյունավետության

պարբերաբար վերլուծություն իրականացնելու և դրա հիման վրա հետադարձ կապի ապահովման մեխանիզմները կատարելագործելու պարագայում, հասարակության հետ կապերն առավել ակտիվ կգործարկվեն:

Փորձագիտական խումբը բավարար է համարում հետադարձ կապի ապահովման համար առկա մեխանիզմները, սակայն դրանց մի մասի ոչ պարբերական բնույթը, իսկ էլեկտրոնային հասցեին ուղարկված նամակների դեպքում՝ արագ արձագանքների բացակայությունը կարող են վտանգել մեխանիզմների արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում հասարակությանը որոշակի գիտելիք փոխանցելու Քոլեջի կողմից իիրականացված քայերը, միևնույն ժամանակ նշում, որ հասարակությանը գիտելիքի փոխանցման ձևերի ընդլայնումը և հստակ պլանավորումը կնպաստեն քոլեջի վարկանիշի բարելավմանը արտաքին շահակիցների շրջանում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՏՊՔ–ում որոշակիորեն ձևավորված են արտաքին և ներքին հաշվետվողականության մեխանիզմներ, քոլեջի գործընթացների թափանցիկության և հետադարձ կապի ապահովման համար գործում են տարբեր մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը համապատասխանում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

ԳՏՊՔ-ն իր նպատակներին հասնելու համար ՌԾ-ում կարևորել է արտաքին կապերի համակողմանի զարգացման հզորացումը: Քոլեջը որպես առաքելություն առանձնացնում է նաև տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժի զարգացումը: ՄՈՒՀ-ը չունի արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն և ընթացակարգեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի զարգացման ուղղությամբ հիմնականում գործունեություն է ծավալում ՄՈՒՀ-ի տնօրինությունը և կարիերայի կենտրոնը, սակայն աշխատանքները դեռևս կանոնակարգված չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնասիրված ու բացահայտված չեն արտաքին կապերի ու միջազգայնացման ապահովման ոլորտում Քոլեջի հնարավորությունները, առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները: Փորձի փոխանակման, զարգացման և միջազգայնացման ուղղությամբ ԳՏՊՔ-ում գործընթացներ չեն պլանավորվում և իրականացվում: Բացի այդ, վերլուծված և գնահատված չեն առկա գործընկերների հետ համագործակցային հնարավորությունները:

Քոլեջի պաշտոնական կայքի օտարալեզու տարբերակներ մշակված չեն: Այցից պարզ դարձավ, որ Քոլեջում տեղական մակարդակում առկա են համագործակցության պայմանագրեր ու հուշագրեր, իսկ միջազգային մակարդակում քոլեջը ընդգրկված է

Եվրամիության կողմից միջին մասնագիտական կրթությանն ուղղված բյուջետային աջակցության ծրագրում, ինչը հնարավորություն է տալիս համալրելու ռեսուրսային բազան: Քոլեջն իր ռեսուրսային բազան (14 համակարգիչ, 5 տպիչ) բարելավել է 2022 թվականին ԵՄ ֆինանսավորմամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի պատասխանատուն իր գործառույթների շրջանակում աշխատանքներ է իրականացնում նաև արտաքին շահակիցների հետ: Ի թիվս այլ աշխատանքների՝ վերջինս իրականացնում է սոցիալական գործընկերների (գործատուներ, աշխատանքային հաջողություններ ունեցող շրջանավարտներ) ներգրավում ուսանողների կարիերայի խորհրդատվության կազմակերպման աշխատանքներում: Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ տեղական ինքնակառավարման մարմինների, գործատուների ու սոցիալական ընկերությունների հետ: Ուսանողների մասնագիտական կողմնորոշման համար Քոլեջը կարևորում է համագործակցությունը «Զբաղվածության տարածքային կենտրոն»-ի հետ՝ զբաղվածության պետական ծրագրերին մասնակցելու ու շրջանավարտների համար թափուր աշխատատեղեր գտնելու նպատակով:

ՄՈՒՀ-ն ունի մի շարք համագործակցության պայմանագրեր տարբեր կազմակերպությունների հետ, որոնց հիմնական գործունեությունը պրակտիկաների անցկացման հետ է կապվում:

Պրակտիկաների կազմակերպման համար ՄՈՒՀ–ը համագործակցում է «Գլոբալքոմ» և «GLOBAL IT COMPANY», տարածաշրջանում գործող բազմաթիվ դպրոցների հետ, «Արեգակ» ՈՒՎԿ Մարտունու մ/ճ, Մարտունու «Տարածքային հարկային տեսչություն», Մարտունու ոստիկանություն, «ՀՀ Զբաղվածության պետական ծառայություն», «Ոսկեփորիկ» գեղագիտության ԶԿ, Ա/Ձ-ներ Ժ. Խլղաթյան, Կ. Նիկոյան, Ն. Ավետիսյան և մի շարք այլ կազմակերպություններ:

«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրի արտադրական պրակտիկայի կազմակերպման համար առկա է խնդիր, քանի որ տարածաշրջանում չկան համապատասխան կազմակերպություններ:

Քոլեջում աշխատում են երկու գործատու դասախոսներ, ոչ բոլոր կրթական ծրագրերով են առկա գործատու-դասավանդողներ:

Քոլեջի շրջանավարտներն ունեն հնարավորություն սովորելու ՀՀ-ում գործող բոլոր պետական և ոչ պետական բուհերում՝ օգտվելով շարունակական կրթությունից:

Քոլեջն ունի հաստատված համաձայնագրեր «Վարդենիսի պետական քոլեջի», «Սևանի պետական քոլեջի», «Մարտունու պետական բժշկական քոլեջի», «Տավուշի Պատրիկ Տէվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջ հիմնադրամի» հետ, ըստ որոնց քոլեջների միջև հաստատվում է գործընկերային հարաբերություններ՝ փորձի փոխանակում, վերապատրաստումներ և այլն: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ նշված հուշագրերի ներուժը Քոլեջը գրեթե չի օգտագործում, սահմանափակվում են այցերով՝ չկիրառելով հուշագրերով նախատեսված հնարավորությունները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պարբերաբար Քոլեջը մասնակցում է Erasmus +-ի կողմից կազմակերպված քննարկումներին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համագործակցությունները հիմնականում ձևավորվում են անձնական կապերի հենքով, աշխատանքային պլաններ չկան:

Ըստ ինքնավերլուծության՝ միջազգային կապեր հաստատելը քոլեջի նախաձեռնությամբ դեռ հնարավոր չէ, քոլեջի սուղ ֆինանսական հնարավորություններից և օտար լեզուների տիրապետման ոչ լիարժեք մակարդակից ելնելով: Օտար լեզուների իմացության մակարդակը քոլեջի դասախոսների և ուսանողների շրջանում գտնվում է հաղորդակցման միջին և ցածր մակարդակի վրա, մասնավորապես՝ դասավանդողների 55%-ը, վարչական աշխատակազմի 65% տիրապետում են ռուսերենին, դասավանդողների 15%-ը, վարչական աշխատակազմի 15%-ը՝ անգլերենին, դասավանդողների 5%-ը, վարչական աշխատակազմի 3%-ը՝ գերմաներենին: Չնայած պարզ չէ, թե տիրապետման ինչպիսի մակարդակ է: Քոլեջում նաև չկան մեխանիզմներ՝ խթանելու և խրախուսելու միջազգային փորձի, օտարալեզու գրականության ուսումնասիրումը դասընթացների և մոդուլների շրջանակում: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ, չնայած վերոնշյալին, առկա են դեպքեր, երբ առանձին դասավանդողներ իրենք են նախաձեռնողականություն ցուցաբերում և մասնակցում անգլերենով վեբինարների, նայում ուսումնական տեսանյութեր՝ թեկուզև անգլերենին ոչ լիարժեքորեն են տիրապետում:

Լեզվաիմացության խնդիրը վեր է հանվել Քոլեջի կողմից, արդյունքում, ըստ ինքնավելուծության նշում են, որ նախատեսել են կազմակերպել ռուսերենի, անգլերենի և գերմաներենի տարբեր մակարդակների դասընթացներ դասախոսների և վարչական անձնակազմի համար: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ դեռևս որոշակի պլանավորումներ առկա չեն, նաև ճշգրտված չէ նպատակն ու արդյունքի կիրառելիության ոլորտը:

Լեզվաիմացությունը պարզելու նպատակով՝ դասախոսների և ուսանողների համար, մշակել են օտարալեզու հարցաթերթեր, սակայն դեռ չեն կիրառել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը կարևորում է արտաքին կապերի զարգացումը և հզորացումը, սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջը չունի արտաքին կապերի զարգացման տեսլականը արտացոլող քաղաքականություն, ընթացակարգեր և չի իրականացնում կանոնակարգված գործընթաց, որը հնարավորություն կտար ՄՈՒՀ-ին հստակ պլանավորել իր գործողություններն այդ ուղղությամբ: Հատկանշական է, որ քոլեջը համագործակցում է մի շարք տեղական կազմակերպությունների հետ, սակայն դեռևս քայլեր չեն ձեռնարկում ընդլայնելու համագործակցության շրջանակը, ինչը կարող է հետագայում դրական անդրադառնալ ՄՈՒՀ-ի պրակտիկաների ծավալային և արդյունավետ իրականացման համար, ինչպես նաև փորձի փոխանակմանը: Համագործակցությունների համակարգումը կընձեռի ուսուցման գործընթացում նաև պրակտիկ դասախոսների ներգրավման, ՄՈՒՀ-ի և աշխատաշուկայի կապի ուժեղացման հնարավորություններ, որն ավելի շահավետ կլինի ուսանողների պրակտիկ և վերլուծական կարողությունների ձևավորման, հետազոտական աշխատաքներ իրականացնելու տեսանկյունից: ՄՈՒՀ–ի ակտիվությունը արտաքին կապերի զարգացման տեսանկյունից հնարավորություն կտա հզորացնելու նաև նյութական ռեսուրսները՝ լաբորատորիաների կամ այլ անհրաժեշտ իրերի ձեռքբերման տեսքով, սակայն այս ուղղությամբ ՄՈՒՀ–ի պասիվությունը հանգեցնում է նրան, որ համագործակցության հնարավորությունները մի շարք դեպքերում մնում են միայն պայմանագրերում և կյանքի չեն կոչվում: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ ՄՈՒՀ-ին ոչ միայն անհրաժեշտ է գործընկերային կապերի ընդլայնումը, այլ նաև նմանատիպ ՄԿԾ-ներ իրականացնող

տեղական և միջազգային հաստատությունների հետ ակտիվ և արդյունավետ համագործակցություն և փորձի փոխանակում, որը կնպաստի իր դրական փորձի տարածմանը, գործընթացների շարունակական բարելավմանն ու զարգացմանը:

Դրական է, որ Քոլեջն իր ռեսուրսային բազան բարելավել է միջազգային կազմակերպության կողմից ֆինանսավորման արդյունքում, սակայն անհանգստացնող է, որ այլ միջազգային կապեր չկան, չունեն մասնագիտական համագործակցությունների շրջանակ և տեսանելի չէ Քոլեջի նպատակադրումը դրանք զարգացնելու ուղղությամբ:

Գովելի է, որ Քոլեջն համագործակցում է հայաստանյան տարբեր բուհերի հետ, սակայն դրանք ուղղված են կրթության շարունակականության ապահովմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ այդ համագործակցությունները ծրագրային և մասնագիտական հարթակ բերելու պարագայում իրականացվող մասնագիտությունների լավարկման առումով դրական արդյունքներ կապահովվի:

Մտահոգիչ է քոլեջի ուսանողների և դասախոսների օտար լեզվի ցածր մակարդակը, ինչը կարող է խոչընդոտել արդի մասնագիտական գրականությունից օգտվելուն, միջազգային փորձի ուսումնասիրմանը: Միևնույն ժամանակ, Քոլեջի կարծիքով օտար լեզվի իմացության ներկա մակարդակը չի նպաստում ակադեմիական շարժունությանը, միջազգային ծրագրերում մասնակցությանն ու ներգրավվածությանը, ինչն էլ հանգեցնում է նրան, որ Քոլեջն անհաղորդ է մնում հետազոտության և կրթության ոլորտի նորագույն ձեռքբերումներին: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ մինչ լեզվաիմացության զագացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելը, անհրաժեշտ է համապատասխան նպատակներ ձևավորել միջազգայնացման ուղղությամբ, ներդնել դրանց միտված խրախուսման և խթանման մեխանիզմներ, ինչի արդյունքում լեզվաիմացության համապատասխան մակարդակի տիրապետումը կվերածվի անհրաժեշտ միջոցի: Այս պարագայում արդեն իս կուրվագծվեն լեզվաիմացության ուղղությամբ ձեռնարկվելիք անհրաժեշտ միջոցառումները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ գործընկերների և գործատուների հետ համագործակցության նեղ շրջանակը, արտաքին կապերի (այդ թվում՝ միջազգայնացման) ուղղությամբ հստակ նպատակների և դրանց ուղղված համակարգված գործընթացների արտահայտված չլինելը, համապատասխան խրախուսող և խթանող մեխանիզմների բացակայությունը, լեզվաիմացության թույլ մակարդակը փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը չի բավարարում չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

ԳՏՊՔ-ում առկա է 2016 թ.-ին հաստատված Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր փաստաթուղթը: Փաստաթղթում որպես որակի ապահովման ռազմավարություն հղում է տրվում 2016 թ.-ի ռազմավարությանը, որն արդեն չի գործում: Փաստաթղթում որպես մեխանիզմներ կամ ընթացակարգեր նշվում են. 1. ԿԾ-երի տարեկան մշտադիտարկում ու պարբերաբար վերանայում, 2. շրջանավարտների վերաբրյալ արտաքին շահակիցների շրջանում հարցումներ, 3. արտաքին շահակիցների հետ պարբերական հանդիպում-քննարկումներ, 4. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների մասնակցություն և նրանց հետ հարցումներ, 5. գործող գնահատման համակարգերի վերաբերյալ դասախոսների և ուսանողների շջանում հարցումներ, 6.դասալսումներ, 7. դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիր: Փաստաթղթում ընթացակարգեր առկա չեն:

Քոլեջը, թեև նշում է, որ որակի ապահովման ներքին համակարգի ներդնումը սկսվել է 2015 թ.-ից, այնուամենայնիվ, համարում է, որ համակարգը նոր է, հատկապես դա պայմանավորեցնելով որակի ապահովման պատասխանատուի հաստիքի ներդրմամբ: Որակի ապահովման պատասխանատուի պաշտոնի նկարագիր է առկա, որը որակի ապահովման և կառավարման ուղղությամբ փորձառության կամ իմացության հատուկ պահանջներ չի առաջադրում:

Քոլեջում առկա է դեռևս 2016 թ.-ին հաստատված և ներդրված ՈԱԿ-ի կանոնադրություն և կանոնակարգ, որոնք նույնաբովանդակ փաստաթղթեր են: Փաստաթղթերում սահմանվում են ՈԱԿ-ի գործառույթները: Թեև կենտրոնի գործառույթներից է որակի ապահովման համակարգի մշակումն ու ներդրումը, սակայն դեռևս հստակ մշակված համակարգ քոլեջում առկա չէ:

Որակի ապահովման կենտրոնն ունի աշխատանքային պլան, սակայն դրանում նշվում է մի շարք նիստերի մասնակցություն, որի նպատակաուղղվածությունը անորոշ է: Աշխատանքային պլանում նշվում է նաև հարցումների, ֆոկուս-խմբային հարցումների անցկացման մասին, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումները հիմնականում անցկացվել են Կարիերայի կենտրոնի կամ կուրսերի համակարգողների կողմից: Փորձագիտական այցից պարզվեց, որ որակի ապահովման պատասխանատուի կողմից ձեռնարկվել է փաստաթղթերի վերանայման գործընթաց: Բացի այդ գլխավորապես նախատեսում են վերահսկողական գործառույթների ստանձնում՝ համագործակցելով վերահսկող արդեն գոյություն ունեցող պատասխանատուների հետ (փոխտնօրեն, ստորաբաժանումների ղեկավարներ): Մասնավորաբար, շատ պարագաներում նախատեսվում է կրկնել նրանց գործառույթները կամ աջակցել իրենց այդ վերահսկողական գործառույթներն իրականացնելիս, կամ աջակցել Կարիերայի կենտրոնին՝ կազմակերպելու միջոցառումներ և այլն: Նախատեսում են առաջիկայում ընդլայնել հարցումները, մասնավորաբար նախատեսում են մոդուլների գնահատման գործընթաց իրականացնել, սակայն դեռևս հստակեցված չեն նպատակները:

Կարիերայի պատասխանատուն իրականացնում է հարցումներ ուսանողների շրջանում՝ ուղղված քոլեջի թույլ և ուժեղ կողմերի բացահայտմանը: Հարցումներն իրականացվում են թղթային եղանակով, չեն կիրառվում էլեկտրոնային հարթակներ կամ մեխանիզմներ: Տվյալների հիման վրա կատարված վերլուծությունները կես էջի շրջանակում փաստաթղթեր են, որտեղ նշվում են որոշ խնդիրներ, որոնցից առավել կարևոր է համարվել առաջին հարկում թույլ լուսավորության խնդիրը, որին քոլեջը լուծում է տվել: Սակայն

լրացված հարցաթերթիկների դիտարկմամբ նկատելի էին ուսանողների կողմից հաճախակի բարձրացվող նաև այլ խնդիրներ (սանիտարահիգիենիկ, ռեսուրսային և այլն)։

Փորձագիտական այցից պարզվեց, որ ամբիոններում դասավանդողներն իրենց նախաձեռնությամբ տարբեր ուսումնասիրությունների արդյունքում վերանայում են իրենց դասավանդման գործընթացը, առկա է լավ փորձ, որը բացահայտելու և տարածելու ուղղությամբ հստակ մեխանիզմներ և գործընթացներ առկա չեն։ Երբեմն դա սահմանափակվում է նեղ շրջանակում զրույցով։

Ֆինանսական բաշխման պլաններում առկա չեն որակի ապահովման ուղղությամբ առանձին հատկացումներ։ Ըստ ինքնավերլուծության Քոլեջի ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը, այս ուղղությամբ արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն ունի, որակի ապահովման կառույցը դեռևս բավարար չափով ապահովված չէ անհրաժեշտ ռեսուրսներով, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ դեռևս ճշգրտված չեն պահանջները, ռեսուրսային կարիքների գնահատում առկա չէ։

ՈԱԿ-ը հաշվետու է տնօրենին, սակայն ՈԱԿ-ի կատարած աշխատանքների գնահատում չի իրականացվում։

Որակի ապահովման պատասխանատուն մասնակցել է ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման։ Ըստ ինքնավերլուծության, որակի ապահովման գործընթացների հետ կապված քոլեջը նկատում է փորձի և գիտելիքների պակաս, որը հնարավորինս լրացնում են խորհրդատվությունների և ՈԱԱԿ-ի ձեռնարկ-ուղեցույցի միջոցով։

Ամբիոնները չեն մասնակցում որակի ապահովման գործընթացներին, ուսանողները ներգրավված չեն որակի ապահովման ուղղությամբ աշխատանքներում, սակայն քոլեջը կարևորում է, որ ուսանողների ներկայացուցիչները մասնակից դառնան ՈԱԱԿ-ի կողմից կազմակեպվող ուսանող-փորձագետների վերապատրաստումներին։

Ուսանողները մասնակցում են դասախոսների գնահատման և քոլեջի ուժեղ և թույլ կողմերի բացահայտման վերաբերյալ հարցումների։ Ներդրվել են նաև գործատուների շրջանում անցկացվող հարցումներ։ Ինչպես նաև գործատուները կարծիքներ են ներկայացնում պրակտիկաներից հետո և, ներգրավվելով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում, կարող են ներկայացնել դիտարկումներ և առաջարկներ։ Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ դրանք փոփոխությունների իրականացման հիմք չեն դարձել և դրանց վերաբերյալ քննարկումներ չեն իրականացվել բացահայտելու նշված խնդրի պատճառը։ Մասնավորաբար երկու տարի շարունակ գործատուների կողմից նշվել է Սոցիալական աշխատանք մասնագիտությամբ ուսանողների մոտ հաղորդակցման հմտությունների և գործնական կարողությունների հետ կապված խնդրի մասին։

Փորձագիտական այցից պարզվեց, որ դասախոսները չեն մասնակցում հարցումների կամ որակի ապահովման գործընթացների հետ կապված քննարկումների։ Շրջանավարտները ևս ներգրավված չեն այս գործընթացներում։ Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ որակի ապահովման գործընթացները նախկինում նույնացել են կուրսերի համակագողների կողմից իրականացված վերահսկողական աշխատանքների հետ։ Որակի ապահովման արդեն եղած քաղաքականությունը, որը ամրագրել են 2016 թ.-ին հաստատված Որակի ապահովման քաղաքականութուն և ընթացակարգեր փաստաթղթում, իրականացնում է ՈԱԿ-ը՝ հանձինս որակի ապահովման պատասխանատուի։

Քոլեջը որոշ քոլեջների և բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունները և փորձագիտական զեկույցներն է ուսումնասիրել, նաև համագործակցում են որոշ քոլեջների հետ ինստիտուցիոնալ հավատարմագրման ուղղությամբ փորձի փոխանակման տեսանկյունից, սակայն այս ամենի վերաբերյալ հստակ ուսումնասիրման հիմքեր առկա չեն։

Քոլեջը որակի ապահովման համակարգի համեմատական վերլուծություն չի իրականացրել, այնուամենայնիվ քոլեջը նշում է, որ համեմատական վերլուծութուն իրականացնելու հմտությունների զարգացման անհաժեշտություն դեռևս ունեն ։

Քոլեջի տարբեր գործընթացներ գտնվում են կամ պլանավորման կամ իրականացման փուլերում, սակայն միաժամանակ առկա է դրանց միջև խզում։ Պլանավորում և իրականացում փոխկապակցվածությունն արտահայտված է ուսումնական գործընթացի պարբերաբար կրկնվող և կանոնակարգերից բխող գործառույթների (մասնավորաբար՝ դասախոսների տարեկան ծանրաբեռնվածության իրականացում, թեմատիկ օրացուցային, ուսումնառության պլանների, օրվա դասի պլանների հաստատում, քննությունների կազմակերպում, վերահսկում և այլն) պարագայում։ Սակայն առկա չեն դրանց արդյունավետության գնահատման հիմքեր։

Քոլեջում դեռևս 2016 թ.-ին փորձել են 2 չափանիշների ուղղությամբ ինքնավերլուծություն իրականացնել, ինչին նպաստել են ՈԱԱԿ-ի կողմից քոլեջների ուղղությամբ ձեռնարկված գործընթացները։ Այնուամենայնիվ սա քոլեջի՝ ինքնավերլուծություն իրականացնելու առաջին փորձն է։ Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման գործընթացներն իրականացնող աշխատանքային խմբում ներգրավված են վարչական և դասախոսական կազմի ներկայացուցիչներ։ Ինքնավերլուծության ձևաչափին համապատասխան քոլեջը հավաքագրել է տեղեկատվություն, փաստաթղթեր, ինքնավերլուծությունը հիմնականում վերլուծական չէ, հաճախ չի երևում SWOT վերլուծության հետ կապը։ Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ ձևաչափով պահանջվող մի շարք ցուցանիշներ (ՈւԽ-ից իրազեկվածություն, գոհունակություն, ռեսուրսներից գոհունակություն, խորհրդատվությունների վերաբերյալ իրազեկվածություն, գոհունակություն և այլն) վերլուծական հիմք չունեն։ Փորձագիտական խումբը ուսումնասիրությունների համար անհրաժեշտություն է ունեցել նաև մի շարք տվյալների և վերլուծությունների, որոնք քոլեջը դեռևս չի իրականացնում։ Քոլեջը չի հավաքագրում իր հիմնական ոլորտներին վերաբերող լիարժեք տվյալներ՝ դրանք պարբերաբար վերլուծելու համար, սակայն նաև հավաքարված տվյալները (մասնավորաբար՝ Կարիերայի կենտրոնի կողմից հավաքագրվող վիճակագրական տվյալները), որոնք ըստ օրենքի պահանջի ներկայացվում են համապատասխան մարմիններին, դեռևս չեն վերլուծվում։

Քոլեջի պաշտոնական կայքում առկա է Որակի ապահովման կենտրոն բաժինը, որտեղ տեղադրված են Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր փաստաթուղթը, Որակի ապահովման պատասխանատուի պաշտոնի նկարագիրը և Որակի ապահովման կենտրոնի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանը։ Առկա չեն որակի ապահովման գործընթացների հաշվետվություններ, վերլուծություններ։ Փորձագիտական այցից պարզվեց, որ շահակիցները հիմնականում չեն օգտվում կայքից, բացի այդ իրազեկ չեն անցկացվող հարցումների արդյունքներից, մասնավորաբար դասախոսները չեն իրազեկվում իրենց վերաբերյալ հարցումների արդյունքներից, որոնք, թերևս, ամփոփվում են միջին ցուցանիշի դուրսբերմամբ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կարևորում է որակի ապահովման գործընթացները, ինչը ընդգծված է 2022-2027 թթ.-ի ՌԾ-ում, քոլեջը մշակել է որոշակի փաստաթղթային հենք և այժմ հատկացված է նաև առանձին Որակի ապահովման պատասխանատուի հաստիք: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում դեռևս որակի ապահովման հստակ համակարգ ձևավորված չէ, նաև գործառնական առումով հստակեցված չէ առանձին օղակների դերը և գործառութային շրջանակը՝ ուղղված որակի ապահովման գործընթացներին, այդ թվում՝ Որակի ապահովման պատասխանատուի հետ կապված: Ուստի վերոնշյալը հստակեցման անհրաժեշտություն ունի և այս տեսանկյունից կարևոր է փորձի ուսումնասիրումը, մարդկային և նյութական ռեսուրսների, ինչպես նաև կարողությունների զարգացման նպատակով կարիքների գնահատումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլերջը հանձն է առել 2016 թ.-ին ներդրված ոչ գործառնական փաստաթղթերի վերամշակման ուղղությամբ աշխատանքները, դրական է նաև, որ այս ուղղությամբ որոշակի քայլեր քոլեջը սկսել է իրականացնել: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ Որակի ապահովման պատասխանատուի գործունեությունը կարող է վերածվել այլ հաստիքներով նախատեսված վերահսկողական գործառույթների կրկնության կամ թե վերահսկողության իրականացման աջակցման՝ որակի ապահովմանն ուղղված կարևոր գործառույթներն անտեսելով: Այս ամենը կարող է խոչընդոտել որակի ապահովման մշակույթի նեդրմանն ու զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում առկա են որոշ մեխանիզմներ (հարցումներ, պրակտիկաների վերաբերյալ կարծիքներ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքներ), որոնք թույլ են տալիս շահակիցների որոշ շրջանակին (ուսանողներ, ծնողներ, գործատուներ, մասնակիորեն՝ նաև աշխատակիցներ) ներգավել որակի ապահովման գործընթացներում: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ եղած մեխանիզմները բավարար չեն ապահովելու լիարժեք ներգրավվածություն բոլոր շահակիցների համար, մեխանիզմները նաև արդիականացման անհրաժեշտություն ունեն՝ ուղղված գործընթացների արդյունավետությանը: Բացի այդ մտահոգիչ է արդեն եղած մեխանիզմների գործածմամբ ստացված տվյալների հետագա վերլուծության չենթարկելը, ինչի արդյունքում տարբեր ոլորտներում առկա խնդիրների բացահայտման գործընթացը արդյունավետորեն չի իրականցվում: Միաժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը որոշակի մեխանիզմներ ներդնի՝ ուղղված տարբեր գործընթացներում (դասավանդման, գնահատման և այլ) լավ փորձի բացահայտմանն ու տարածմանն: Այս տեսանկյունից կարող են օգտակար լինել քննարկումների կազմակերպումը, դրանց հրապարակայնացումը:

Մտահոգիչ է, որ որակի կառավարման սկզբունքով առաջնորդվելը դեռևս չի վերածվել գործող մոտեցման: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը կարողանա ապահովել ռազմավարական նպատակներով պայմանավորված տարբեր ոլորտներում (այդ թվում՝ որակի ապահովման) իրագործելի պլանավորում: Ապա նաև՝ ապահովել որակի կառավարման մյուս փուլերի (իրականացում, գնահատում և բարելավում) փոխկապակցված իրագործումը, ինչը կնպաստի գործընթացների արդյունավետության բարձրացմանն ու նպատակների իրագործման երաշխիքների ստեղծմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է ինքնավերլուծության իրականացման ուղղությամբ քոլեջում կատարված աշխատանքները, սակայն գտնում է, որ քոլեջի տարբեր ոլորտների գործընթացների հետ կապված համակողմանի տվյալների պարբերաբար հավաքագրման և վերլուծման անհրաժեշտություն կա, ընդ որում կարևոր է տվյալների հավաքագման տարբեր մեխանիզմների գործածումը (փաստացի տվյալներ, հարցումներ, քննարկումներ, ֆոկուս-խմբային հարցումներ և քննարկումներ, դիտարկումներ և այլն)։ Այս գործընթացները, որպես որակի ապահովման կարևոր գործընթացներ, անընդհատ զարգացնելու անհրաժեշտություն ունեն։ Կարևոր է վերլուծությունների արդյունքները համապատասխան օղակներին, շահակիցներին հասանելի դարձնելը, քանի որ դա առաջին նախապայմանն է դրանց հենքով հետագա դրական փոփոխություններ ակնկալելու ուղղությամբ։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ ԳՏՊՔ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես նաև որակի ապահովման ներքին համակարգը դեռևս լիարժեք մշակված և ներդրված չեն, հստակ արտահայտված չէ որակի ապահովման կենտրոնի դերը և հեռանկարները, ներքին և արտաքին շահակիցների ոչ բավարար ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին, տարբեր ոլորտների գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծման մեխանիզմների անկատարությունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ շահակիցների իրազեկվածության մասով առկա խնդիրները, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**։

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Արմենուհի Սարգսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

5 դեկտեմբերի, 2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Արմենուհի Սարգսյան՝** 2006 թ.-ին ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի դոցենտ: 2012-2016 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ: 2017-2018 թթ.-ին եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018-2023 թթ.-ին՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն: Մի շարք գիտական նախագծերում հանդիսացել և հանդիսանում է ավագ գիտական աշխատող, առաջատար գիտական աշխատող կամ ղեկավար: 2017 և 2019 թթ.-ին դասախոսությամբ հանդես է եկել Անգլիայի Քիլի համալսարանում, Erasmus+ շարժունության ծրագրի շրջանակներում: 2018-2023 թթ.-ին ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է, մինչ այդ (հիմնման պահից) հանդիսացել է պատասխանատու քարտուղարը: 1 ուսումնամեթոդական ձեռնարկի և 70-ից ավել գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:
2. **Նարինե Միրականյան՝** 2006թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» բաժինը: 2016թ. շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2006-2014թթ. աշխատել է որպես հանրային դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ (Վրաստան), 2014-2019թթ. աշխատել է ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Մանկավարժության գիտահետազոտական և բնագիտամաթեմատիկական առարկաների բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ, 2019-2020թթ. աշխատել է Հյուսիսային համալսարանում՝ որպես Որակի ապահովման վարչության պետ: 2020-2022թթ. Սփյուռքի հանձնակատարի գրասենյակի «ԻԳործ» ծրագրի շրջանակում աշխատել է ՀՀ կրթության տեսչական մարմնում՝ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչությունում, եղել է նաև ՌԳՍՊՎԳ վարչության փորձագետ: 2023թ.-ից ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում ծրագրերի ղեկավար է, 20 և ավելի գիտամանկավարժական հոդվածների հեղինակ է:
3. **Մեղա Խաչատրյան՝** 2017թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ֆակուլտետը: 2021-2022թթ.-ին աշխատել է Գ. Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցում որպես ուսուցչուհի: 2016թ.-ից Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի դասախոս է:
4. **Միքայել Գրիգորյան՝** 2021 թվականից սովորում է Հայաստանում ֆրանսիական քոլեջում՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	18.09.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսումներ	12:00	13:00	60 րոպե
2.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
3.	Հանդիպում տնօրենի հետ	14:20	15:10	50 րոպե
4.	Հանդիպում տնօրենի տեղակալների հետ	15:20	16:20	60 րոպե
5.	Հանդիպում գործատուների հետ	16:30	17:20	50 րոպե
6.	Հանդիպում հեռակա բաժնի, ուս. մասի և առարկայական հանձնաժողովների ղեկավարների հետ	17:30	18:30	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:40	19:00	20 րոպե

N.	19.09.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
6.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ	14:30	15:30	60 րոպե
7.	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	15:40	16:20	40 րոպե
8.	Ռեսուրսների դիտարկում	16:30	17:30	60 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	19:00	80 րոպե

N.	20.09.2023 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Զուգահեռ հանդիպում «Նախադպրոցական կրթություն» և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության կրթական ծրագրերի պատասխանատու/ների հետ	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմնատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ		09:30	10:30	60 րոպե
2.	Զուգահեռ հանդիպում «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Սոցիալական աշխատանք» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմնատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Զուգահեռ հանդիպում «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Սոցիալական աշխատանք» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմնատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	11:40	12:30	50 րոպե
4.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (հաշվապահ, կադրերի տեսուչ, գրադարանավար, արխիվավար, կարիերայի ուղղորդման պատասխանատու, բուժքույր, գործավար, պրակտիկայի պատասխանատու) ղեկավարների հետ			12:40	13:20	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:30	14:30	60րոպե
6.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ			14:40	15:20	40 րոպե
6.	Բաց հանդիպում			15:30	16:10	40 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:20	18:30	130 րոպե

N.	21.09.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե

3.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	10:40	13:00	140 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	14:20	15:00	40 րոպե
6.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	15:10	15:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Քոլեջի զարգացման ռազմավարական պլանավորում կամ ԶԾ գործողությունների պլան	1
2.	Բոլոր ստորաբաժանումների վերջին 5 տարինեի հաշվետվությունները	2
3.	Աշխատաշուկայի ուսումնասիրության վերաբերյալ տեղեկատվություն	2
4.	Արտաքին և ներքին շահակիցների կարիքները բացահայտող մի շարք մեխանիզմների՝ հարցումներ	2
5.	Կառավարման խորհրդի վերջին 3 նիստերի արձանագրությունները	2
6.	Բոլոր ստորաբաժանումների վերջին 5 տարիների աշխատանքային պլաններ	2
7.	Ամբիոնների նիստերի արձանագրություններ	2
8.	Քոլեջի կողմից որդեգրած ՄԿԾ-ների մշտադիտարկման ու պարբերաբար վերանայման գործընթացի արձանագրություններ	3
9.	Բոլոր մասնագիտությունների ծրագրերի փաթեթներ /թեմատիկ պլաններ գնահատման թերթիկներ/	3
10.	Դասախոսների փաթերթներ /3 ՄԿԾ/	3
11.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3
12.	Ուսումնական պլաններ, որտեղ արտացոլված է կատարված բարելավումները:	3
13.	Մատյաններ	3
14.	Ուսանողների թվի ճշգրիտ տվյալներ	4
15.	Շրջանավարտների բազա	4
16.	Ուսումնական մասի կողմից ուսանողների ընթացիկ, եզրափակիչ՝ կիսամյակային և տարեկան առաջադիմությունների քանակական և որակական արդյունքների հավաքագրված տվյալները	4
17.	Դիմորդների ընդունելության գործընթացի արձանագրություններ	4
18.	Ամփոփված տվյալներ կապված ուսանողների առաջադիմության, կարիքների, հաճախումների հետ /փաստեր/	4
19.	Կուրսղեկի հաշվետվություն	4
20.	Ըստ մասնագիտությունների տարբեր ուստարիների շրջանավարտների թիվ	4
21.	Պրակտիկ ոլորտի դասավանդողների ցանկ /գործատու դասախոսներ/	5
22.	Խրախուսման և պարգևատրումների վերաբերյալ տվյալներ	5
23.	Դասախոսների բազա	5
24.	Դասավանդման որակի գնահատման նպատակով իրականացված դասալսումների արձանագրություններ	5
25.	Հաստիքացուցակ	5
26.	Կուրսային աշխատանքներ	6
27.	Փաստաթուղթ, որտեղ արտացոլված է ռեսուրսներից բավարավածության հետազոտության հիմքերը	7

28.	«Ոսկեփորիկի»-ի հետ իրականացվող համագործակցությունների շրջանակում կատարվող այցերի, պրակտիկաների, դասընթացներիի արձանագրություններ /փաստաթղթեր/	9
29.	Համագործակցությունների համաձայնագրեր և հուշագրեր /պայմանագրեր/	9
30.	ՈԱԿ-ի կողմից իրականացված բոլոր հարցումների հարցաթերթերն ու վերլուծությունները	10
31.	Ռեսուրսների վերաբերյալ ուսանողների կողմից լրացված հարցաթերթերի օրինակներ	10
32.	Այն արտաքին շահակիցների ցանկը/շրջանակը/, ում հետ իրականացվել են հարցումներ	10
33.	Հարցումների լրացված օրինակներ, որոնք կատարվում են մոդուլների ավարտին։	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Լսարաններ,
- Առարկայական կաբինետներ,
- Համակարգչային լսարաններ,
- Մարզադահլիճ,
- Գրադարան,
- Արխիվ,
- Բուժկետ,
- Հանդիսությունների դահլիճ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳՏՊՔ - Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ

ԿԳՄՍ նախարարություն - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈՒԽ - ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ